

234/14
998

1914

398.7

U-S8

2010

12002

Gr. A 18.102

Ժողովրդական
ՀԱՐՈՒՍ ԵՐԱԶՍՀԱՆ

136



Թ Ի Բ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրաֆակայիս փող. № 6

398.7

U-58

1914

ՀԱՐՄ.
2-57082

Խմբագրեց—կազմեց Գեորգ Սկանդարեանց

398.7

Ա-58

ՆՈՐ ԵՒ ՀԱՐՈՒՍՏ ≡

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

≡ ԵՐԱԶԱՀԱՆ

ԲՈՒՆ ՀՆՅՈՑ ԵՒ ՀԻՈՄԱՅԵՑՈՑ ՏՈՄԱՐԻՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Երազան:
2. Լուսնի երազացոյց:
3. Իգնատիոսի մարմնախաղաց փորձերը:
4. Բաղդադուշակ այրուքնով:
5. Արիւն առնելու լաւ և վատ ժամանակը ըստ լուսնի ցուցման:
6. Չար աստղը:
7. Բժշկարան:
8. Օգտաւէտ գիտելիքներ և այլ հետաքրքիր նորութիւններ:



Թիֆլիս
Տպարան «Հ Ե Ր Մ Է Ս»
1914

hmf



ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ՃՈՒ ԵՐԱԶԱՀԱՆ

Ա.

Աստուած տեսներ լաւ է տեսնողի համար. ամեն չարից կազատւի, պատիւը կաւելանայ, իւր ընտանիքը կը սիրի, թէ աղքատ է կը հարստանայ, իսկ եթէ հիւանդ է կառողջանայ: Աստուած տան մէջ տեսներ՝ նորոգութիւն է: Աստղ տեսներ—լաւ է: Աստղը տանդ մէջ տեսնես՝ տանդ բարիքը կաւելանայ, եթէ օտարական ունես ողջութեամբ տուն կը վերադառնայ: Աստղ եր տեսներ՝ ճանապարհ դնալ է և շահ: Աստղ երի երկնքից վայր ընկներ —մեծամեծների մահ է և կորուստ: Ասպար տեսնես կամ թէ առնես—օտարից պատիւ ստանաս: Արեղայ տեսներ փառք, պատիւ, կամ կռիւ է: Աքաղաղ տեսներ՝ բարի է և կռիւ նշան է: Ագռաւն եր տեսնես՝ թշնամիներդ քեզ վրայ կը յարձակեն, աղօթիր առ Աստուած, որ ազատես: Աթոռ տեսներ մեծութիւն և բարձրութիւն է: Աթոռ նստելը՝ բարձրութիւն է: Ալեոյր իրան տեսներ՝ հարս-

44620-ահ



29599-63

ահ
9

տութիւն է և շահ: Ալիւրը շահ է և
ոյժ, իսկ եթէ Ալիւրը ամանով տեսնես՝
մուրազին հասնել է: Ակնեղէն կամ թան-
կազին քարեր տեսնելը աղախին է և ծա-
ռայ: Ականջը՝ աղջիկ է կամ աչքալոյս:
Աղուէսը եթէ փախչի, իր պարտքատէրը
իրանից կը փախչի: Աղուէսի հետ
կուելը, իր օգտին կուլ անել է: Աղու-
էսի հետ եթէ խաղաս՝ լաւ կնոջ հետ կը
ծանօթանաս: Աղջիկ փոքր տեսնես՝ շատ
շահ է և բարի է: Աղջիկ թէ ծոցումդ տես-
նես—խնդութիւն է: Աղջիկ փոքր տեսնելը
—շատ շահ և բարի: Աղջիկ երեխայ տես-
նելը՝ ցնորք է և նեղութիւն: Ամեն աղջիկ
և կին տեսնելը՝ լաւ է խնդութիւն և իր
սրտի կամքը կը կատարւի: Աղբիւր եթէ
բակիդ մէջ տեսնես՝ շահ է և շատ բանե-
րից օգտւելու նշան: Աղբիւրում լա-
ցւելը լաւ է: Աղբիւրից ջուր բերելը
վատ է: Աղբիւրից ջուր խմելը շնորհք
է: Աղու Անանուխ տեսնելը քաղցր
խօսք է և բարի: Աղ սև տեսնելը վատ խօսք
է և տրամոլութիւն: Աղ կտրած տեսնես
կուլը կը խափանւի: Աղի ձուկը կսկիծ է և
հոգս: Աղբը մարդու հարամ ոռճիկ է:
Աղեղն՝ մեծ գրոյց է և բամբասանք: Աղե-
ղն աւուր իրեն տեսնելը թշնամու լեզու
է: Աղի լոս հանելը տուն շինել է և լաւ:
Աղբատին ողորմութիւն տալը շահ է:

բարի և Աստածանից պարգև է: Աղեկ
հագոճատ տեսնելը ուրախութիւն և շնորհք
է: Ամանաթ վերցնելը և պահելը ուղղու-
թիւն է: Ամբաստանել մէկին փրկու է
խիստ և վատ: Աբմաւը (խուրմայ)
շատ բարի է և անուշ խօսք: Այծը ճանա-
պարհ է: Այրւած հագոճատը երկիւղ և
մահաւան փրկու է: Անձը և տես-
նելը բարի է: Անդաստանը—բարի
ժամանակ է և վաստակ: Անասունը—հալալ
ոռճիկ է: Անապատում նստելը—նեղութիւն
է: Անուշ ուտելու ինչ որ էլ լինի լաւ է:
Անուշահոտ բանը—լաւ է և հալալ ոռճիկ:
Անկանիլ (ընկնել) գետը—կարողութիւնից
զրկւել և աղքատութեան նշան է: Աչքեր
տեսնելը—մեծ հարստութիւն է: Աչքը մեծ
ունենալը—կեանքի յաւելումն է: Աչք հա-
նելը կինը կամ որդին կը մեռնի: Ապարան-
ջանը նեղութիւն և հոգս է: Աբրեշումը
լաւ է և շահ: Աբրեշումի որդը—գործ գըտ-
նել է: Ապաշխարհողը—իւր հաւատքն է:
Առիւծ տեսնելը—թագաւոր, իշխան և կամ
մեծ մարդ է: Առիւծների կուլը թագաւոր-
ների կամ մեծ մարդկանց կուլ է: Առիւծի
հետ եթէ կուես մեծ մարդուց երկիւղ կը
հասնի քեզ: Առիւծի վրայ նստելը—մեծու-
թեան հասնել է: Առիւծից փախչելը և առիւ-
ծի ետևից չը գնալը—չարից ազատւել է:
Առիւծի դէմդ ելնելը, մեծ երկիւղ է: Առիւ-

ծի անամօթութիւնը տեսնես—թշնամիսների յարձակել է այն երկրի վրայ: Առիւծի միս ուտելը—թշնամուցդ բարիք դայ քեզ: Առու տանդ մէջ տեսնելը գանձ է և շահ: Ատամները—ազգերն են: Ատամները թափելը—շատ գանձ գտնել է: Ատամը առաջինն ընկնի—սգի կը հանդիպես: Առաջին ատամներից հանելը տրտմութիւն է իսկ եթէ վերինը—ազգական մեռնի: Եթէ առամների մեծերը հանես—մօտաւոր ազգական կը մեռնի: Ատամներ սրբելը—ուրիշի աշխատանք ուտել է: Ատամներդ եթէ սկսեցած տեսնես—հիւանդութիւն է: Արեգակ տեսնելը—թագաւոր է: Արեգակը ձեռքումդ տեսնես—մեծութիւն է: Սաւար արեգակ տեսնելը—տեսնողի համար լաւ չէ: Արեգակին իւր տեղը տեսնելը—թագաւոր տեսնել է: Արեգակին երկնքից վայր ընկած տեսնելը—նեղութիւն է կամ պայծառութիւն: Արեգակի և լուսնի միասին ընթանալը տեսնես—թագաւորների կռիւ և հիւանդութիւն է: Արեգակի և լուսնի իրարից հեռու ընթանալը—երկրի բաժանումն է: Արծաթը մաքուր տեսնես՝ հաւատք է: Արծաթը նեղութիւն և ծանրութիւն է: Արմաւենին դաւակ է և ուրախութիւն: Արիւն թափելը մեծ փրկանք է: Արիւն տեսնես, կամ արիւն առնես—շնորհք է: Աղբիւր—մեծ մարդ է:

Արծւի վրայ նստելը—իշխանութեան հասնել է: Արծւի հետ կռւելը—մեծ մարդկանց հետ կռւել է: Արծիւը եթէ խփի—մեծ մարդուց փրկանք կստանաս: Արմաւք հաւեր տեսնելը—գեղեցիկ և շնորհալի կին է: Արջ տեսնելը—տգէտ մարդու խօսք է և ամեն վատ դադան տեսնելը—թշնամի է: Աւետարան տեսնելը—հալալ մուրազ է: Աւազը որ ձեռքդ առնես, կամ տեսնես—մեծ մարդուց բան կստանաս: Աւագ երէց մեռած տեղից կենդանացած տեսնելը—հին զրոյցը կը կենդանանայ: Աւագակ տեսնես—կռից զգուշացիր: Աւագ քեզ տեսնես—բարի է և լաւ: Աւագ տեսնելը—թշնամի յարձակի երկրի վրայ: Աւագ տեսնել կամ խօսել հետը—շնորհք է և բարի: Այգին ծաղկած տեսնելը—մեծ ուրախութիւն է:

Բ.

Բարձրանալ երազում—շահ է և բարի: Բարձր տեղից վայր ընկնելը—մահւան փրկանք է: Բարձր տեղերի վրայ ման գալը—մեծութեան հասնել է: Բարբառել և ալլ երաժշտութեան ձայն լսելը—անուշ խօսք է: Բառ տալը—կռիւ է: Բազմոց տեսնելը—որդի է մեծութեան նշան և կամ լաւ մարդ: Բազուկ մաքուր տեսնելը—օգուտի նշան է, իսկ բազուկ կեղտոտ—ըզգուշացիր մեղքից:

Բաղանիքը—հոգս է: Բաղանիքից դուրս գալը—
 հոգսից ազատել է: Բաղանիքում լւացւելը
 կամ մնալը մեծ նեղութիւն է: Բաղ տես-
 նելը—մեծ մարդ է: Բակ շինելը, կամ հիմք
 ձգելը բարձրութիւն է: Բահը լեզու է: Բամ-
 բակ տեսնելը—արգարութիւն է և սըրբու-
 թիւն: Բանջարը շահ է: Բանջարանոցը աւերւած
 տեսնես—լաւ չէ: Բահեռ ժողովելը—լեզու է:
 Բահեռն տեսնել—մեծ բարութիւն է: Բերդ
 որ տեսնես—թշնամիներդ առաջ կարգա-
 բանաս: Բերդ մտնելը—ամրութիւն է և
 պարիսպ: Բերդ աւերելը—նեղութիւնից ա-
 զատել է: Բերանը—ձեռնադրութիւն է:
 Բերանի լւանալը կամ ցամաքելը—ռոճիկ
 է: Բեր (ձեռնափայտ) տեսնելը կամ առ-
 նելը—եղբայր կամ որդի է: Բլուր տեսնելը
 —շինութիւն է և խաղաղութիւն: Բուն—նե-
 ղութիւն է: Բուրվառ առնելը կամ շարժելը
 —լաւ չէ, կռիւ է: Բուրդ սպիտակ տեսնել
 կամ առնել—մեծ առողջութիւն, հալալ ոռ-
 ճիկ և շահ է: Բուրդ սև—սուգ է և լաց:
 Բոբիկ իրեն տեսնելը—զէնք կը գայ իր վե-
 րայ: Բուքը—գութի ձայն է: Բոգ կնոջ հետ
 խօսելը—փառք է: Բոգ տեսնել, խօսել կամ
 խաղալը—շահ է: Բոպիկ իրան տեսնելը
 փնաս է: Բորոտ իրան տեսնելը—հարստա-
 նալու և մեծութեան նշան է: Բողկ ուտելը
 առողջութիւն է և շահ: Բրինձ տեսնելը—

բարի է և շահ: Բրել կամ գործել—բարու-
 թիւն է և շահ:

Գ.

Գառներ տեսնելը—մեծ շահ է: Գառներ
 մորթելը—բարի չէ: Գառներ լւանալը տըրտ-
 մութիւն է: Գազան տեսնելը—երկիւղ է
 առանց փնասի: Գազաններ շատ տեսնելը—
 ահ է: Գազանը, որ ձայն արձակէ—երկրի
 համար նեղութիւն է: Գազանի խաղալը—
 թշնամու հաշտութիւն է: Գազանի փախչելը
 խաղաղութիւն է: Գազանը—մեծութիւն է:
 Գանձ տեսնես կամ առնես շահ է: Գարին
 —հարստութիւն է: Գարի սերմանել
 կամ ժողովել—ռոճիկ է: Գայլ տես-
 նելը—թշնամի է: Գայլին եթէ սպանես—
 թշնամուդ յաղթես: Գայլին զարկես և չը
 սպանես—կնոջ հետ մեղք կգործես: Գայլի
 վրայ նստելը—նեղութիւն է: Գայլին եթէ
 խփես և սպանես—գործդ կը յաջողուի: Գայ-
 լի միսը եթէ ուտես—ուրիշից հարամ ու-
 տես: Գայլագռան—անհաւատ մարդ է: Գա-
 զան տեսնելը—թշնամու դեմ պաշտպանւել
 է: Գաւազանը ձեռքիդ լաւ է, որդի է և
 մեծ շահ: Գաւաթ բռնել ձեռքը—զաւակի
 խնդութիւն է: Գետի հեղեղի բարձրանալը—
 տխրելու նշան է: Գետ անցնելը—հառաչել
 է: Գետը պարզ տեսնելը—առատութեան նը-

շան է: Պղտոր գետը—լիութիւն է: Գետում
լաացւելը—նեղութիւն է: Գետի վերեւից ներ-
քէ գնալը—թշնամուց յաղթել է: Գետ
տեսնելը—նեղութիւն է: Գերի իրան տես-
նելը—մեծութիւն է, և նեղութիւնից ա-
զատուել: Գերանդին մեծութիւն է և շահ:
Գերանը երբ կոտորւի—տանտէրը կը մեռնի
և առհասարակ մլաա է: Գերեզման բանալը
մլաա է: Իրան գերեզմանում տեսնելը—վատ
է, պատասխանատուութեան կենթարկւի և
բանտ կնստի: Գեղեցիկ իրան տեսնելը—
փառք է: Գեղեցիկ նկարած պատկեր տես-
նելն էլ նոյնն է: Գեշ հոտը—վատ խօսք է:
Գէր իրան տեսնելը—տղաների աճումն է:
Դինի անարատ տեսնելը, խմելը կամ գնելը
ոյժ է և շահ: Դինին գեղով խմելը—հարամ
ուճիկ է: Դիսաւոր աստղը—մեծութիւն է:
Դինձը—անուշ խօսք է: Դինձ ուտել կամ
ժողովելը—կոխ է: Դինտ հագնելը մեծ
շահ է: Ականջից գինտ հանելը—մահւան
մլաա է: Դիշերով ճանապարհ գնալը—նե-
ղութիւն է: Դիրք կարգալը ժողով է: Դիր
զընելը—մուրազ է և լաւ: Դլխատւած իրան
տեսնելը: մահւան մլաա է: Դլուխը մար-
մնից հեռու տեսնելը—օտարութիւն գնալ է:
Դլուխը կտրած ձեռքին բռնած տեսնելը—
մեծ գանձ գտնելու նշան է: Դլխին գեղ
քսելը անոյշ խօսք է: Դլուխդ եթէ ածիլես
ամեն նեղութիւնից կազատուես: Դլուխ լա-

նալը մլաա է: Դլուխ սպիտակ տեսնելը յան-
կարծ շահ գայ: Դխտոր տեսնելը ցնորք և
աղքատութիւն է: Գնդակ խաղալը մեծին
լաւ է, փոքրիկին վատ: Դոթի իրան տես-
նելը, հարստութիւն է և լաւ: Գոմէշը շահ
է և ուրախութիւն: Գոմէշը գետում—բարի
համբաւ է: Գոմ շինելը շահ է և ուրա-
խութիւն: Գոյնզգոյն հագուստը—խնդութիւն
է: Գուշ գտնելը մեծ շնորհք է: Գորտ տես-
նելը հաւատացեալ մարդ է: Գորտերը—նոյնն
է: Գորտի ձայնը խնդութեան զրոյց է:
Գորտ սպանելը հաւատացեալ մարդու հետ
հաշտութիւն կնքել է: Գլխարկ գնելը պա-
տիւ է: Գրաւական տանից հանելը մահւան
մլաա է: Գրող տեսնես—մահ է: Գրիչ և
կաղամարն—խելք և ճանապարհ է: Գրչա-
մանը—կին է:

Դ.

Դահեկան (զրամ մէկ ուրբի) տեսնելը
կամ առնելը շահ է. կին առնի և կամ տղայ
վաստակի: Դամոնը—հիւանդութիւն է: Դա-
նակ տեսնելը կամ գնելը—լաւ չէ, վատ լե-
զու է: Դանակ եթէ կորցնես—չար լեզուն
կը խափանւի: Դանակ շինողը ցաւոտ մարդ
է: Դաշտ տեսնես—երկիւղով բան առնես:
Դաշտից դուրս գալը—նեղութիւնից ազատ-
ւել է: Դատաւոր տեսնելը—աւտիճանաւո-

քին աստիճանի աւելացումն է: Դատաստանը մեղքերի քաւութիւնն է: Դարպաս շինելը կամ տեսնելը հարուստ կինն է: Դարպաս լայնացնելը—մեծութիւնն է: Դարպաս փակելը մեծ մարդու ընկնելն է: Դարպասը—թագաւորից պատիւն է: Դարբին տեսնելը—մեծ մարդ է: Դարբնութիւնն եթէ ինքդ ասես—լաւ տանուտէր լինես: Դարբնի սալը և կռանը—մեծութիւնն է: Դեկան (տասնոց) թէ օգտակար մարդ տայ կամ կորցնէ, կամ եթէ գողանան ամեն հոգսից ազատւի և թէ հիւանդ է ողջանայ: Դեկան և դրամ աշնանը տեսնես—արիւնհեղութիւնն է, իսկ եթէ գարնանը՝ բորոտութիւն և մաշկի հիւանդութիւնն է: Դեղին պղինձը, գործիք է: Դեղին սեխը, դեղին հագուստը, կամ դեղին ձի հեծնելը վատ է և հիւանդութիւնն է: Դեղնեղութեան և մեղքի նշանն է, Դդում տեսնելը—հիւանդին լաւութիւնն է: Դդում ցանելը ջերմ է, իսկ ուտելը—հիւանդութիւնն է: Դե տեսնես—բարի զրոյց է: Դիպակ տեսնելը (մետաքսի շոր) և հագնելը մեծ պատիւն է: Դմակ տեսնելը և կամ ուտելը—հիւանդութիւնն է կամ անհոգութիւն: Դուռն տեսնել, կամ առնելը—պատիւն է և մեծ մարդու հետ ծանօթանալ: Դուռ բանալը—իր բախտը կը բացւի և իր կամքը կը կատարւի: Դուռ ձգելը—մեծ մարդու ընկնել և կործանումն է: Դուռ կոտրելը—մահաւան

նշանն է: Դուռը դուրս գալը—լաւ նշանն է: Դուռ տեսնելը պատիւն է: Դրամ տեսնելը կամ հաւաքելը ազահութիւնն է: Դրացու հետ բարեկելը կոխ է:

Ե.

Եղ տեսնելը—ահ է: Եզը նստած աւետիս է կամ սիրելին կը գայ: Եզի միս ուտելը լաւ է, բայց ոմանք էլ ասում են թէ նեղութիւն և հիւանդութիւնն է: Եզներ և սայլերը—նեղութիւնն է: Եզների կուելը երկրի ահ է կամ թշնամի: Եզ մորթելը—մահաւան ֆլաս է: Եկեղեցի տեսնելը կամ շինելը փառք է, բայց ոմանք էլ ասում են, որ նեղութիւնն է: Եղ ուտելը բարի է: Եղնիկը տան մէջ տեսնելը—զուգակից է կամ իւր սիրելին գայ: Եղջերուն—երկրի նեղութիւնն է: Երգեհոնը—տրամութիւնն է: Երկիրը—խնդութիւնն է: Երկանք աղալը կամ տեսնելը—անհանգստութիւնն է: Երկաթ տեսնել կամ գնել տրամութիւնն է և շատ վատ: Երկաթով ծեծելը նեղութիւնն է և ցաւ: Երակ առնելը սրբութիւնն է: Երակ կտրելը—մահաւան ֆլաս է: Երես լաւնալը—զէն է: Դեղին երեսը մեղք է իսկ կարմիրը—գործը լաւ կը գնայ: Դեղեցիկ երեսը—մեծ փառք է: Երագում երազ պատմելը—շատ լաւ է: Երէցին յարութիւն առնելիս—հին խօսք ու զրոյց

է: Մեռած երէցին կենդանացած տեսնելը — մեծ զրոյցի նորոգւել է: Երեցին մեռած տեսնելը — մեծ կուրի խափանումն է:

Զ.

Զանգակի ձայն լսելը — ուրախութիւն է: Զափրանը հիւանդութիւն է: Զափրանով կերակուրը — լաւ է: Զինելը — մեծ նեղութիւն է: Զինւոր տեսնես պատրաստ կաց տրտմութիւնից: Զմրութը — լաւ է: Զնդանը մեծ հոգս և սուգ է: Զուռնան — անձրև կամ կռիւ է: Զրոյց տալը — նեղութիւն և չարութիւն է: Զրահը — պարոնութիւն է կամ սպանութիւն: Զրահ հագնելը՝ զէնք է:

Է.

Էշ տեսնելը — նեղութիւն է: Էշի մեղուններ ծամելը — թշնամիների կորուստ է: Էշ սպիտակ արածելիս, կամ բարձած և վրան նստած բարի է և պատիւ:

Ը.

Ընկոյզը — կռիւ է: Ընկոյզ ժողովելը — լաւ չէ: Ըղունգ կտրելը վնաս է: Ըղունգ երկար ունենալ աղքատութիւն է: Ընկուզենին — տհաճութիւն է:

Թ.

Թագաւորին ողջունելը կամ բարևելը — փառք է: Թախտը — մեծութեան նշան է: Թախտը կանաչ տեսնես — ցաւ է: Թամքաւորը — կուարար մարդ է: Թանաք եփելը — լաւ է: Թանաքը վրադ թափես — վատ խօսք լսես: Թարախով իրան տեսնելը շահ է և հարստութիւն: Թարախը արիւնսխառն — մեղաց գոյժ է: Թագնւած իրեն տեսնելը — բարի է: Թևաւոր իրան տեսնելը — անհանգստութիւն է: Թթու մածուն ուտելը — հարամ ոռճիկ է: Թթի ծառը հարուստ մարդ է: Թթու ինչ էլ լինի — նեղութիւն է: Թղի ծառը լիբբ մարդ է: Թուզ դալար տեսնել՝ վնաս է: Թուզ չոր ուտելը — շահ է: Թուխ մօրուս տեսնելը — շահ է: Թուխ իրան տեսնելը — մեծութիւն է: Թռչելը — օտար տեղ գնալ է: Թէ իր կտրից ուրիշ կտուր թռչի — իր կինը թողնի և ուրիշ կին առնի: Թէ թռչի և շատ բարձրանայ լաւութեան հասնի: Թռչունը թէ քեզ մօտենայ — մարդիկ քեզ երանի տան: Թռչուն արձակելը մեծ բարութիւն է: Թըռչունի փախչելը մեծ վնաս է: Թռչունների կռիւը — վնաս է: Թռչունը եթէ քեզ հետ խաղայ — թշնամիդ քեզ կը սիրի:

Ժ.

Ժամատունը զարդարւած տեսնելը—ար-
քայութեան արժանանալ է: Ժամ գնալը—
կեանքիդ բարիք կը լինի: Ժամատուն մըտ-
նելը—հաւատին լաւ է: Ժամատան աղօթելը
—լաւ բան է: Ժամհարը—դպրութեան
հասնել կամ նեղութիւն է: Ժամ անելը լաւ
է: Ժուռ գալը—լաւ չէ: Ժողովը—աղմուկ
է: Ժամացոյցը օգուտ է:

Ի.

Իրան մանուկ ժամանակ ալևոր տես-
նելը—կեանքի յաւելումն է: Իրան ալևոր
ժամանակ մանուկ տեսնելը նոյնն է: Ինքը
եթէ նաւ նստի—կեանքը զւարթանայ: Նաւ
նստելը—մեծերից պատիւ ստանալ է: Ինքն
տնապատում նստած՝ հիւանդութիւն է: Ի
բարբարոս նստելը (ի-կնշահակի մօտ) նե-
ղութիւն է: Ի կին նստելը բարի է և լաւ:
Ինքն սպիտակ, կամ սև ձի նստելը աւետիս
է և շահ: Ինքը սև ջորի և ձի նստելը—շահ
է: Ինքը գայլ նստի—նեղութիւն է, կառք
նստի մեծ պատիւ է, իսկ լաց լինելը շատ
նեղութիւն է: Ինքը բարձր տեղից ընկնի—
պատուից ընկնել է: Ինքը սերմ ցանէ կամ
վարէ—բարի է: Ինքը ջրհոր կամ գետ ըն-
կնի—նեղութեան մէջ ընկնի, իսկ ջրհորից

կամ գետից դուրս գալը—պատիւ է և ա-
զատութիւն: Իրիցուց (տէր-տէրից) խաչ
առնելը—տրտմութիւն է: Իրք (որևէ բան)
ուզեն քեզանից—պատիւ է: Իրեն գերեզմա-
նում տեսնելը դատաստանի և բանտի հան-
դիպել է: Ինքը եթէ մեռելից համբոյր
ստանայ—փնաս է: Իրեն եթէ վայրենի գա-
զան հալածի—պատրաստ կաց զօրաւոր մար-
դուց և կամ թշնամիդ յաղթէ քեզ:


Լ.

Լոյսը—աշխարհի խաղաղութիւնն է: Լոյ-
սը հանգած տրտմութիւն է առաջնորդաց:
Լուսինը և արեգակը առաւօտեան տեսնես
—ազգին մեծ փնաս է: Լուսնի աստղը խիստ
շահ է: Լուսինները—երկրի ահ է: Լու-
սինը—փնաս է: Լուսինը խաւար—թագաւո-
րի մահ է: Երկու լուսին տեսնելը—երկու
թագաւոր միմեանց վրայ յարձակեն: Լուսն
ոռճիկ է: Լուծ դնելը վատ է: Լուծը (եզ-
ների) բարի է: Լեառն բարձր տեսնես—
տրտմութիւնից ազատես: Լեհերը (վերմակ)
հարուստ կնիկ է: Լիմոնը (կիտրոն) անուշ
խօսք է:

Խ.

Խան կամ սուլթան տեսնելը—անչափ
լաւ է: Խաչակները—մեծ պատուի նշան է:

29599-63



Խաչը—նեղութիւն է և չարչարանք: Խա-
չաքարը դատարկ մարդ է: Խաւարը—չար-
չարանք է: Խաւեարը—հիւանդութիւն է:
Խաղողը—անձրև է և ցնորք: Խաղողի սպի-
տակը—խնդութիւն է, իսկ սևը—լաց: Խա-
ղող—ժողոված գանձ է: Խայտ հանդերձ տես-
նես—աւագ մեռնի: Խարդալը՝ օտար կին է:
Խարբուզակ—սև, սպիտակ և կանաչ, տես-
նելը լաւ է—իսկ ուտելը—հիւանդութիւն:
Խիարը—ուրախութիւն է: Խմոր ուտելը—
շահ է: Խնձորը—տղայ և աղջիկ է, ուտելը
շահ: Խնձորը եթէ քեզ տան աւետիս է:
Խնձորի ծառը մեծ մարդ է: Խուլ և համրը
—շահ է: Խունկ ծխելը—հարստութիւն և
անուշ խօսք է: Խորոված միս ուտելը շահ
է: Խոզ մեծ տեսնելը—մահ է կամ այլազ-
գիք: Խոզի միս ուտելը ազգականի մահ է:
Խոտը—լաւ մարդ է: Խոտ ժողովելը պա-
տիւ է:

Ծ.

Ծաղկեայ անդաստանը—շահ և ուրա-
խութիւն է: Ծաղիկը—անհոգութիւն է: Ծա-
ղիկ քաղելը կին առնել է: Ծաղկելը—բարի
է: Ծաղկած ծառը—նոյնպէս: Ծաղիկն ու
բորը—սրտնեղութիւն է: Ծառ տնկելը—յի-
շատակ է, կամ բարի բան: Ծառ պտղով
բարի է, կարել կամ այրելը—փրկաւ: Ծառը

եթէ ծուռը լինի լաւ չէ: Ծառի տերևի թափ-
ւելը արիւնհեղութիւն է: Ծառի ընկնելը—
մահ է: Մեծ ծառի վայր գլորւելը—մեծ
մարդ կը մեռնի: Ծառի վրայ նստելը կամ բար-
ձրանալը փառք է: Ծառը կանաչ—գանձ է,
իսկ չոր—տրտմութիւն: Ծամ խուզելը կին
է: Ծամ կտրելը—բաժանումն է: Ծառան
աւետիք է և խնդութիւն: Ծառայելը
—լաւ չէ: Ծանր բան շալակելը—մեծ մեղք
է: Ծիծաղելը տրտմութիւն է: Ծեծը տղայ
է կամ մեծութիւն: Ծնունդ նստելը մեծ
շահ է: Ծունր դնելը յոյս է: Ծովը պղտոր
—նեղութիւն է, ցամաք ծովը լիութիւն է:
Ծովում լացւելը շահ է: Ծովը ներս գնալը
—թշնամու առաջ արդարանաս: Եթէ ծովը
մարդու ներս քաշի—տեսնողը գողի ձեռքով
սպանւի:

Կ.

Կամուրջ շինելը—շատ լաւ է: Կառք
նստելը մեծ պատիւ է: Կայծակը—խռովու-
թիւն է: Կարկուտը երկրի համար փրկաւ է:
Կանաչ ծաղիկը—բարի է: Կապար տեսնելը՝
անհոգութիւն է: Կարասը—նեղութիւն է:
Կապուտը—աւերումն է: Կաղամբի տակ հա-
նելը—ըստ Դանիէլի—փրկաւ է: Կենդանի ի-
րան գերեզմանի մէջ տեսնելը—մեծ զրոյց
է: Կին առնելը—մահաւան փրկաւ է: Կին հե-

ըարձակ (մազերն արձակած) նոյնն է: Գեղեցիկ և զարդարւած կին տեսնելը—երկիր է կամ քաղաք: Կնոջ հոսսերը կտրելը—մեծ վնաս է: Կնոջ նայելը—բարի է և լաւ: Կոյս իրան տեսնելը—շահ է: Կուժը որդի է: Կուժը ջրով լիքը տեսնելը—բարի է: Կուժաշ տեսնելը, կամ ուտելը—լիութիւն է: Կրակի մէջ ընկնելը—մահ է և սով: Կտակ հանելը լաւ չէ: Կօշիկ տեսնել կամ հագնելը—ճանապարհ է:

Հ.

Հաց տեսնելը—բարի է և լաւ: Հաւը ուրախութիւն է: Հաւ սիրամարդ—մեծ իշխան է: Հաւը ձկն վրայ—յանկարծ շնորհք է: Հաւի խօսելը—նշան է որ մարդ կեանքից կը զրկուի: Հաղորդ առնելը—մարդու ծեծ է: Հասկ քաղելը—ըստ Պլատօնի—ուրախութիւն է: Հարսանիքը—տրտմութիւն է: Հայրապետը—մեծ զրոյց է: Հայր մեռած կամ կենդանացած տեսնելը—մեծ շահ է: Հալաւն այրւած տեսնելը—շահել է: Հանդերձ կորցնելը—վնաս է: Գոյնզգոյն հանդերձ ունենալը—նոյնն է: Հեռաւոր երկրում իրան կամ ուրիշին տեսնելը շահ է և բարի: Հիմք ձգելը—հարստութիւն է: Հիմքի վրայ հիմքի ձգելը—բարի է: Հիմքը շինութիւնից դուրս գերեզման է: Հիւանդը

—նեղութիւն է: Հող վերցնելը նոյնն է: Հում միս ուտելը—մեծ զրոյց է: Հոր փորելը—խիստ նեղութիւն է:

Զ.

Ձեռներ լանալը—բարի է: Ձեռիդ եթէ ճրագ տեսնես—որդի է: Ձէթ եփելը—հիւանդութիւն է, ոմանք էլ ասում են, որ մուրազ է և լաւ: Ձէթով օծելը շնորհք է: Ձիթապտուղ ժողովելը բարի է: Ձի նստելը—մուրազ է: Վագող ձի նստելը—շատ լաւ է: Սև ձի կամ ջորի նստելը, մեծամեծներից շահ ստանալ է: Ձու տեսնելը—կռիւ է: Ձոր տեսնելը կամ անցնելը—նեղութիւնից ազատուել է: Ձուկը—չար լեզու է ու ջրից հանելը—ամպ կամ ջերմ լինի: Ձուկը կրակի վրայ—երկրի նեղութիւն է:

Ղ.

Ղան կամ սուլթան տեսնելը—անչափ լաւ է: Ղեկը—ճանապարհ է: Ղամպար (ջահ) վառելը—բարի է: Ղեստի տեսնելը լաւ չէ:

Ճ.

Ճանապարհ գնալ կամ յետ դառնալը—լաւ է և նեղութիւնից ազատուել է: Ճոպա-

նը (չւանը) երկար ճանապարհ է: Ճառ լը-
սելը հոգս է: Ճնճղուկ տեսնել կամ ունե-
նալը—բարի է: Ճրագը վառած տեսնես—
ծածուկ և գաղտնի գործերը կը յայտնւին:
Ճրագը հանգած—տան կործանումն է: Ճըն-
ճղուկ տեսնել կամ բռնելը—բարի է:

Մ.

Մանուկ մօրուսով, ծեր, կամ արևոր
տեսնելը—կեանքի տւելանալ է և լաւ: Մա-
տանի տեսնես կամ ջինել տաս—իշխանու-
թիւն է. իսկ կոտորած մատանին փնաս է: Մա-
տանին կորցնես—կինդ կամ սիրելիդ մեռնի:
Մատանի ուրիշից առնելը—անհոգութիւն է:
Երկու մատանի ունենալը—երկու կին առնի:
Մատանի արծաթից տեսնես—նեղութիւնից
ազատւես: Մատակ ուղտի վրայ նստելը—
հիւանդութիւն է: Մարգարիտը—մեծութեան
նշան է: Մարդու լերդ կամ ոսկոր ուտելը
—բանտ մտնելու նշան է: Մեծ հասակով
իրեն տեսնելը—փառք է: Մեծ փակեղ ու-
սին գցելը—մեծ շնորհք է: Մեռել տեսնելը
մեռելից բան առնելը, մեռելի կենդանա-
նալը—անցած աղմկալի զրոյցը կը նորոգւի:
Մեռած իրեն տեսնելը—նշան է որ շատ
կապրի: Մեռելը եթէ խօսի—զգոյշ կաց և
մի հաւատար: Մեռել թաղելը—շփօթութիւն
է: Մեռելը գերեզմանում տեսնելը—չարը

խափանի: Շատ մեռելներ տեսնելը—վատ
է: Մեղր ուտելը մեղք է և սրտնեղութիւն:
Միս աղի ուտելը—հիւանդութիւն է:
Միրգը նոյնպէս հիւանդութիւն է: Մոմը
եթէ վառած տեսնես—ուրախութիւն է և
որդի: Մորեխը—հոգս է և աշխարհի նեղու-
թիւն: Մութ ու մուկը փնաս է և չար:
Մօրուսաւոր իրան տեսնելը—շնորհք է:
Մօրուս գէշ—գէնք է, փետելը—խաղաղու-
թիւն:

Ն.

Նախիրը եթէ գիւղ գայ—մեծ մարդ
գայ: Նախիր եթէ շուրջդ գայ—խռովու-
թիւն է: Նապաստակը իր նման տղայ լինի:
Նաւը ոսկուց և արծաթից—բարի է: Նաւ
նստելը—շատ ապրի, երկար կեանք ունե-
նայ: Նաւերը—հեռու տեղից շահ գայ: Նա-
ւը գանձով—նեղութիւն է: Նաւ կոտորած—
մահւան նշան է: Նոր բան տեսնելը—օտա-
րութիւն գնալ է: Նուրը—օտարներից շահ
ստանալ է: Նստել և լաց լինելը—շատ մեծ
նեղութիւն է:

Շ.

Շապիկ սպիտակ տեսնելը, կամ հագ-
նելը—արդարութիւն է, սեր—տրտմութիւն

իսկ, կեղտոտը—մեղք: Յորենի շեղջ
(կիտւած) տեսնելը կսկիծ է: Շէնք շինելը
—բարութիւն է, իսկ քանդելը վնաս: Շար-
բաթ խմելը—խելքի յաւելումն է: Շիշը իւ-
ղով—ռոճիկ է և շահ: Հողը փառք է: Շուք
առնելը—մեծ պատիւ է: Շների միմեանց
հետ կռիւր—լաւ չէ: Շան հաշիւը և կծելը
—չար լեզու է: Շուն կամ թեւաւոր գազան
տեսնելը—թշնամիներ են:

Ռ.

Ռսկի խնձորը—պատիւ է: Ռսկին կամ
արծաթը շահ է: Ռշխարը—ձմեռն է և ցուրտ
Ռշխարին ճանապարհում—հարստութիւն է:
Ռշխարը մորթւած—ձմեռը լաւ գայ: Ռշ-
խարը սև—սուգ և տրտմութիւն է: Ռշիւ
կոտրելը—մաշումն է: Ռսկը բերելը լաւ է:
Ռւղտը—պարոն է: Ռւղտը նստած—հաւատ
է: Երկու ուղտ կուելը—իշխաններ կուեն:

Չ.

Չամիշը—շատ վնաս է: Չամանը կռիւ
է և աղաղակ: Չանկը—տրտմութիւն է:
Չարին տեսնելը—չարից ազատուել է: Չիրը
սակաւ—շահ է: Չոբանը—ճանապարհ է:
Չոր ծառը—մեռած մարդ է: Չոր միսը ոռ-

ճիկ է և շահ: Չուխայ սպիտակ—արդարու-
թիւն է: Կանաչը—հարստութիւն է և սևը—
տրտմութիւն:

Պ.

Պատարագը—կռիւ է: Պարտէզը—բարի
է և արդարութիւն: Պարտէզ տնկելը—բա-
րի է: Պոզ կոտրելը—չարը խափանի: Պրդ-
պեղը—կսկիծ է: Պղպեղ ուտելը—թշնամուց
պատրաստ կաց: Պսակը—շատ լաւ է. ոմանք
ասում են թէ կռիւ է: Պսակը զարդար-
ւած նոյնն է: Պսակ արծաթի—հիւանդու-
թիւն է: Պսակ փշեայ—մեծ շահ է: Պսակը
քարից—մեծութիւն է և պարզ: Պսակելը
լաւ է. յաճախ և կռիւ է:

Ջ.

Ջրաղաց շինելը—մեծութիւն է, բան-
դելը շինութիւն է: Ջրաղացի աղունը—
հիւանդութիւն է: Ջիւլտ տեսնես—անհա-
ւատ մարդու հետ խօսես: Ջայլամ հաւը
տեսնես—նեղութիւնից ազատես: Ջուրը
մաքուր խմելը—շատ լաւ է: Ջուրը տանդ
մէջ—լաւ չէ: Ջուրը պղտոր տեսնելը, կամ
խմելը տրտմութիւն է: Գնացող ջուրը—
բարի է: Ջուրը գետից վերցնելը—վնաս է,

իսկ աղբիւրից—բարի է։ Զուր շատ տեսներ,
կամ անցներ—հեծեալք են։

Ռ.

Ռապատ մտներ—նեղութիւն է։ Ռե-
հան ծաղիկը բարի է, Ռոճիկ տեսներ—
վատ է։ Ռումբը կանգնած—մեծութիւն է և
պատիւ։ Ռումբը ձեռքին ունենալը—ճանա-
պարհ է և երկիր։ Ռովախ ձգելը—թողու-
թիւն է հոգոց, մարմնոց և ամեն բանի։
Ռուս տեսներ—մեծ հակառակութիւն է։

Ս.

Սազը—մեծ մարդ է։ Սալորն—առող-
ջութիւն է։ Սաղաւարտն—անհոգութիւն է։
Սամիթ դալար լաւ է։ Սանդուղ կանգնած
—մեծութիւն է և բարի։ Սանկը և զրահը
ծանրութիւն է։ Սանք բռները գէնք է։ Սար-
բով շորի կամ ձի տեսնես—մեծութեան հան-
դիպես։ Սենեակ քանդելը—կնոջից բաժան-
ւել է։ Սիսեռը—բարի է։ Սիւնը նեղութիւն
է և կռիւ։ Սիստորը, սոխը և սապոնը—կըս-
կիծ են։ Սոխ և սագի միս ուտելը—հիւան-
դութիւն է։ Սուգ անելը—ուրախութիւն է։
Սուլթան տեսներ մեծ ցաւ է։

Վ.

Վախեցած կամ վառւած իրան տես-
ներ—հարստութիւն է։ Վանք և արեղայ
տեսներ—նեղութեան ամբոխ է։ Վառած
մարդ տեսներ—փաս է։ Վարդ տեսնես—
կին առնէ։ Վարդ քաղելը—բարի է։ Վար-
տիկը բարի է։ Վիշապ տեսնես—մեծ մարդ
է, ոմանք ասեն թէ նեղութիւն է։ Վայրե-
նի գազանից փախչելը—մեծից փաս կը
կրէ։ Վերմակը—հարուստ կին է։

Տ.

Տաճարը զարդարւած—բարի է։ Տա-
ճար այրելը—խռովութիւն է։ Տաճիկը—
թշնամիների յարձակումն է։ Տախտը դի-
պակով բարի է։ Տախտը կանաչ—ցաւ է։
Տիկը և տիկինը—տրտմութիւն է։ Տղայ զըր-
կելը ցաւ է և հիւանդութիւն։ Տուն շինելը
շատ բարի է։ Տուն աւերելը—բարի չէ։
Տուն իրանը, կամ ուրիշինը—աւերած տես-
ներ—լաւ չէ անիրաւութիւն է։ Իր կամ
ուրիշի տունը արծաթից շինւած տեսնես—
մահու փաս է։ Տունկ տնկելը—ազգերի
օրհնութիւն է։

Զ.

Յեխ տեսներ—փաս և տրտմութիւն

է: Յեցը լեզու է: Յեց հանելը—նեղութիւն է, ոմանք էլ ասում են լաւ է: Յորենը ցընորք է: Յուլ բռնելը—խիստ շահեկան է:

Փ.

Փայտ տեսնելը, կամ կտրելը շատ լաւ է: Փոխինձ ուտելը—լաւ չէ, դէնք է: Փողածելը—թշնամիների կորուստ է, նաև մեծանայ և բախտի տիրանայ: Փուշ կտրելը—թշնամիների կորուստ է: Փուշը, եթէ ձեռքիդ մէջ հաւաքես—շատ ժամանակներում ապրես: Փոքր մարդ տեսնելը—շնորհ է:

Ք.

Քաղաք մտնելը—բարի է: Քաղցր բան ուտելը—լաւ չէ: Քար ձգելը—փառ է: Քար ժողովելը—լեզու է: Քարէ հիմք ձգելը—թշնամի է: Քարի վրայ նստելը—մտածունք է: Քացախ խմելը—չարը խափանի: Քղամիդ հագնելը խնդութիւն է: Քահանայից խաչ առնելը—լաւ չէ:

Օ.

Օձի հետ խօսելը—այնպիսի բան է, որ ամեն մարդ և ամբողջ աշխարհը կը զարմանայ: Օձին եթէ սպանես—թշնամուց ա-

զատես: Օձին եթէ անկողնումդ տեսնես—կին առնես: Օձը եթէ խայթէ—փառ է: Օձը եթէ իւր վրայ յարձակւի—թշնամուց ան գայ: Օձը թէ փորը մտնի—թշնամուց չար խօսք լսէ: Օձը անկողնում սպանելը—կնոջ մահ է: Օձը եթէ տեսնես և չվախենաս թշնամուց անհոգ լինես: Օձը եթէ իր տանը տեսնի—կնոջ հետ թշնամանայ: Օձին եթէ երկու կտոր անես—թշնամուցդ քեզ շահ գայ: Օշինդրը—կռիւ է:

Առհասարակ բոլոր այն մարդիկ, որոնք վատ երազ կը տեսնեն և կը զարհուրին—թող յիշեն Դանիէլ մարգարէին, երեք Մանկանցն ու Աթանազինէ հայրապետին: Եկեղեցում երեք մոմ վառեն, եօթն անգամ ծունը դնեն և վերոյիշեալ սուրբերին յիշեն՝ ամեն չար և վատ երազը Աստուծով բարին կը կատարւի:





II.

ԼՈՒՍՆԻ ԵՐԱԶԱՅՈՅՑ

1-ն լուսնի: Օրն բարի է ամեն բանի, Աղամը նոր ստեղծեց, սերմանել, տնկել, ճանապարհ գնալ, հիմք դնել: Նոյը նմանապէս տապանի սկիզբն այսօր դրեց, Մովսէսը ժողովրդին այսօր հանեց Եդիպտոսից, Գաբրիէլն այսօր ողջոյն տուաւ Մարիամին և Սողոմոնը այսօր դրեց տաճարի հիմքը. հիւանդը առողջանայ, կորածը գրտնւի, երազը բարին կատարի:

2-ն լուսնի: Օրն բարի է. Նախաստեղծըն այսօր ընկաւ: Կայենն Աբէլին սպանեց, ծնունդը հեզ և խոնարհ լինի. բայց և շնացող: Հիւանդը չի ապրի: Կորուստը մինչև 40 օրը կը գտնւի: Տունի տնկել և նաւով ճանապարհ գնալը լաւ է: Երազը երեք օրում կատարւի:

3-ն լուսնի: Օրն բարի է ամեն բանի. ծնւածը շնորհալի և պատերազմող լինի: Այսօր Հէդինէն դժոխքից խաչը գտաւ և Սողոմոնը այսօր ծնաւ: Գնելը և վաճառելը բարի է: Կորուստը գտնւի, փախածը յետ գառնայ. երազը բարին կատարւի:

4-ն լուսնի: Օրն բարի է. Հվաճառես-չգնես և տանից դուրս չգնաս: Նաբուգոդոնոսորն այսօր տաճարը քանդեց և մոգերն այսօր ընծայ բերին. Հերովդեսն այսօր մոգերից խաբւեցաւ. ծնւածը շնորհալի լինի և մեծութեան հասնի. հիւանդը մեռնի երազը սուտ է:

5-ն լուսնի: Օրն ամեն բանի բարի է. մեղուն լաւ կը գայ. սերմանել, տնկել, ճանապարհ գնալ, նաւ ուղղել. ծնւածը բախտաւոր լինի, որովհետև այսօր նոյը մտաւ տապանը և Սողոմոնը այսօր տաճարը շինեց: Կորուստը կը գտնւի, հիւանդը կառողջանայ և երազն ի բարին կը կատարւի:

6-ն լուսնի: Օրն ամեն բանի համար բարի է. մանուկներին ուսման տալ: Տէրն այսօր Առաքեալներին քարոզութեան ուղարկեց. ամեն բան գործելը—բարի է: Հիւանդը կառողջանայ, ծնւածը բախտաւոր կը լինի, կորուստը մինչև 40 օրը կը գտնւի. երազը մի տարւայ մէջ կը կատարւի:

7-ն լուսնի: Օրն վատ է: Աստուած հէնց այսօր Աղամին և Նւային դրախտիցը դուրս արաւ: Ծնւածը գող լինի, հիւանդը շատ կը նեղանայ—բայց շատ կապրի: Երազը սուտ է:

8-ն լուսնի: Օրն ամեն բանի համար բարի է. այսօր եղաւ թլպատութեան սկիզբը և լեզուները այսօր բաժանւեցան, հի-

ւանդը ողջանայ, կորուստը գտնւի, ծըն-
ւածը ձայնաւոր լինի և ծերանայ. երազն
ութ օրն կը կատարւի:

9-ն լուսնի: Օրն բարի է. այսօր մկր-
տւեց Քրիստոս. ծնւածը երկար կեանք ու
նենայ. գնել, վաճառել, ճանապարհ գնալ,
մանուկ մկրտել, թագաւոր տեսնել, մեծի
հետ դատաստան մտնել: Կորուստը կը գըտ-
նւի երազը բարին կը կատարւի:

10-ն լուսնի: Օրն ծնունդն է: Գործ
չանես—լաւ չէ. ամեն բանից պատրաստ
կաց, մի երգւիր և երգումս մի տար. մա-
ղերդ մի սանրիր. ծնւածը խեղդամահ լինի.
հիւանդը ողջանայ, փախածը գտնւի, արիւն
թողնելը փեսա է: Երազը երեք օրւայ մէջը
կը կատարւի:

11-ն լուսնի: Օրն բարի չէ. աշխարհը
ջրհեղեղով ջնջւեցաւ. չգործես, երգում չը
տաս և ուրիշին էլ երգում տալ չտաս. այ-
սօր կէտ ձուկը Յովնան մարգարէին կուլ
աւաւ. շուրր չմտնես. ծնւածը շուտով կը
մեռնի, ճանապարհ չգնաս: Աղամը այսօր
դրախտից դուրս եկաւ. հիւանդը կը լաւա-
նայ. արիւն առնելը վնաս չէ. երազը նոյն
օրը կը կատարւի:

12-ն լուսնի: Օրն բարի չէ. չը երգես
և ուրիշին էլ երգում չտաս. ամեն բանից
զգոյշ կաց և աղթիր. երազը երեք օրւայ
մէջ կը կատարւի:

13-ն լուսնի: Օրն բարի է ամեն բանի, գոր-
ծել, հիմք դնել, հարսանիք անել. ծնւածը
խմաստուն լինի, հիւանդը վատանայ, երազը
բարին կատարի:

14-ն լուսնի: Օրն հնազանդութիւն է ամեն
ինչի չը գործես. ծնւածը չարութեամբ
կը մեռնի, հիւանդը նեղութիւն կը կրի.
Քրիստոս այսօր խաչւեցաւ. երազը 40 օր-
ւայ մէջ կը կատարւի:

15-ն լուսնի: Օրն բարի է ամեն բա-
նի. ծնւածը զօրաւոր լինի. հիւանդը չորս
օրից յետոյ մեռնի: Քրիստոս այսօր ոչնչա-
ցեց դժողքը. շինել, վաճառել, տնկել՝ բա-
րի է: Ինչ որ գործես շնորհաւոր լինի,
կորցրածը կը գտնւի, երազը նոյն օրը կը
կատարի:

16-ն լուսնի: Օրն բարի է. սերմանել,
տնկել, հարսանիք անել, մանուկներին ուս-
ման տալ, մեծի մօտ գնալ. Քրիստոս այսօր
պատիւ ստացաւ մոգերից. ծնւածը գեղե-
ցիկ լինի, շատ կեանք ունենայ և հարստա-
նայ: Կորուստը չի գտնւի. հիւանդը կապրի.
արիւնը կը վնասէ. երազը երեք օրում կը
կատարւի:

17-ն լուսնի: Օրն բարի է. հիմք գցել,
պատերազմել. հիւանդն առողջանայ, երազը
նոյն օրը կը կատարւի:

18-ն լուսնի: Օրն բարի է. հարսանիք
անել, ճանապարհ գնալ. Քրիստոս այսօր

հողինները բաժանեց. ծնւածը շատախօս լինի. երազն բարի է:

19-ն լուսնի: Օրն բարի է. սերմանել, տնկել, մանուկներին ուսման տալ, մեծի մօտ գնալ. Քրիստոսն այսօր պատիւ ստացաւ. ծնւածը բախտաւոր լինի, և հանճարեղ բայց արբեցող, լեզուից վատ և շնացող. հիւանդը կը մեռնի. թշնամուց պատրաստ կաց. երազը բարին կատարի:

20-ն լուսնի: Օրն բարի է. Աստուած այս օրը երեւեցաւ Աբրահամին և օրհնեց նրան. սերմանել, շինել, վաճառել, ճանապարհ կամ մեծաւորի մօտ գնալ և ամեն ինչ գործելը բարի է: Ծնւածը խոնարհ և աղօթասէր լինի, բայց մերշր կրակով կամ ջրով մահանայ. Աստուած այս օրը այրեց Սօդոմ-Գոմորը. երազը սուտ է:

21-ն լուսնի: Օրն բարի է. այսօր Զաքարիան պապանձւեց. չվաճառես, չգործես, չգնես, երգում չտաս և չերգես. հիւանդը կը մեռնի. ծնւածը աղօթասէր կը լինի. երազը սուտ է:

22-ն լուսնի: Օրն չար է. մեղք չը գործես. բայց գնել, վաճառել, մանուկներ ուսումն տալ և ամեն բան գործելը բարի է. ծնւածը երկարակեաց լինի և մեծերին սիրելի. այս օրը Աստուած հրաման տւեց Գաբրիէլ հրեշտակապետին, աւետիք

տալ սուրբ կոյս Մարիամին. երազը բոլորն կատարւի:

23-ն լուսնի: Օրն բարի է. այսօր Քրիստոս երեւեցաւ աշակերտներին. ծնւածը բախտաւոր, ողջամիտ և յաջողակ լինի. ճանապարհ գնալ, վաճառել, գնել բարի է. կորածը կը գտնւի, փախածը կը դառնայ, հիւանդը կարող է մեռնել. արիւնը շահաւէտ է. երազն 30 օրւայ մէջ կը կատարւի:

24-ն լուսնի: Օրն բարի է. պատրաստ կաց ամեն բանից. ճանապարհ մի գնալ, մի վաճառիր. մի գնիր, մեծի մօտ մի գնալ. ծնւածը անօգուտ լինի և անվաստակ. փախածը յետ դառնայ. այս օրը Նրոսաղէմը կործանւեցաւ. երազը սուտ է:

25-ն լուսնի: Օրն չար է. մի երգիր և մի երգումն տալ, ուրիշ տեղ մի գնալ. ծնւածը շէկ, շատամօրուս լինի. փախածը դառնայ, հիւանդը մեռնի, արիւնը շահաւէտ է և երազը-սուտ:

26-ն լուսնի: Օրն բարի է. գործիր. բայց երգումն մի տար. ծնւածը շուտ կը մեռնի. կարելի է փող վերցնել, ճանապարհ գնալ. հարսանիք անել, կորուստը կը գտնւի. Քրիստոս այս օրը ծնաւ—երազը բարի է:


27-ն լուսնի: Օրն բարի է. Աբրահամն այսօր իր որդուն մատաղ արեց և մանանան այսօր տրեց իսրայէլացոց ծնւածը Աստուածափառ պաշտօնեայ լինի, կորուստը գտնւի.

հիւանդը ողջանայ, փախածը դառնայ, երազը սուտ է:

28-ն լուսնի: Օրն բարի է. որեւէ գործ կատարել, մանուկներ ուսուցն տալ. մեծի մօտ գնալ, հարսանիք անել. այս օրը Քրիստոսին ընծայ տարան. ծնւածը գեղեցիկ և շնորհալի լինի. կորուստը չի գտնւի. հիւանդը մեռնի. երազն երեք օրում կը կատարուի:

29-ն լուսնի: Օրն բարի է. գործել տնկել, շինել, հարսանիք անել. ծնւածը բախտաւոր լինի և հանճարեղ, բայց արբեցող, լեղում սիրելի՝ գործով—շնացող. հիւանդը մեռնի, երազն սուտ է:

30-ն լուսնի: Օրն բարի է. կնքել, պըսակել, հիմք դնել, ճանապարհ գնալ, հիւանդը ողջանայ. կորուստը գտնւի: Նաւ չնստես. ծնածը արբեցող բայց բախտաւոր լինի. երազը բարի է:



III.

ԻԳՆԱՏԻՈՍԻ ՄԱՐՄԱԽԱՂԱՑ ՓՈՐՁԵՐԸ

Թէ գաղտն խաղայ—շահի և մեծութեան նշան է, բարի գտնի, անունը բարձրանայ, բարի ճանապարհ գնայ և ուրախանայ:

Թէ գազաթը խաղայ—բարի է ամենից սէր կը վայելի, մեծութեան և փառքի կը հանդիպի, մեծ թագաւոր կը տեսնէ, իշխաններից պատիւ կստանայ ճանապարհ կը գնայ, կը շահի և կուրախանայ:

Թէ ծոծրակը խաղայ—չարից, հոգսից, նեղութիւնից և տանջանքից կազատուի:

Թէ գլխի աջ կողմը խաղայ—որին ատոււմ է կը սիրի. երկար ճանապարհ գնայ և լաւ շահի. բարեբի հանդիպի և բարով յետ դառնայ. թէ ձախը—չարից ազատւի կամ որդի լինի. մեծերից և իւր ազգից բարեք ստանայ բախտաւորութեան և մեծութեան հանդիպի: Թէ գլխի վերի կողմը խաղայ, հոգսերի մէջ կընկնի, բայց պատուոյ հանդիպի: Թէ ամբողջ գլուխը խա-

դայ—շատ և շատ բաների հանդիպի
շատ բան ընկնի իրան. ծածուկ բան
կտեսնի և կամ գաղտնիք կը լսէ:
Թէ ձաւատը խաղայ—շատերից պա-
տիւ ստանայ, ամեն բան ինչ որ ցանկանայ
առնի. գանձ կը գտնի, դատաւորութիւն կը
վայելէ, մեծերից բարձրանայ և փառքի
հասնի: Թէ աջ քնե՛րա կը խաղայ—կը մե-
ծանայ իշխանից, աւագից կազատուի, հոգսի
մէջ կընկնի կնոջ համար կմեռնի: Թէ ձախ
քնե՛րա կը խաղայ, լիութեան և խնդու-
թեան հանդիպի, պատուի և մեծութեան
շնորհք կառնէ, կամ մարդու հետ կը կուլի:
Թէ աջ յօնքը խաղայ—սրտհեշտութիւն է և
կորուստը կը գտնուի: Թէ ձախ յօնքը խա-
ղայ—լիութեան և խնդութեան հանդիպի,
երկար կեանք վայելի, շահի և կամ հի-
ւանդանայ: Թէ յօնքամէջը խաղայ—նե-
ղութեան լուր առնէ, անվայել խօսք լսի,
տրտմի և վիրաւորւի: Թէ աջ աչքի առա-
ջին աղբիւրն խաղայ՝ սրտնեղութեան, սը-
գոյ և տրտմութեան կը հանդիպի, կամ թըշ-
նամու հետ կուլի վէրք կստանայ և լաց կը լինի:
Թէ ձախ աչքի—շատ բարւոյ և ուրախութեան
կը հանդիպի, հեռաւորին կը տեսնի և կը
սրտնեղի: Թէ աչ աչքի յետին աղբիւրը
խաղայ—շատ բարւոյ կը հանդիպի, հեռա-
ւորին կը տեսնի և կը խնդայ և ինչի որ
հանդիպի ուրախութեամբ կը վայելէ: Թէ

ձախ աչքի—հարստութեան և մեծութեան
կը հանդիպի մեծի կը մօտենայ, ազգական-
ներից կը տեսնի և կուրախանայ, բարու-
թեան կը հանդիպի և բան կը գտնի: Թէ
աջ աչքի վերին կողմը խաղայ—
հարստութիւն է և պատիւ. բարձրանայ,
ինչ որ ժողովի ցնծութեամբ կըլէ, կամ թէ չէ
արտասուի և սրտնեղի, բայց շուտով ազա-
տուի: Թէ ձախ աչքի—ատելութիւն է և
լաց, բայց յետոյ բարի է ուրախութիւն և
խնդութիւն, կամ—սրտհեշտութեան հիւր
գայ: Թէ աջ աչքի ներքի կողմն խաղայ
—հեռու ճանապարհ գնայ, հեռաւորին տես-
նի, բարի գտնի և ուրախութիւն է: Թէ
ձախ ազգի—շատ բարւոյ կը հանդիպի, նը-
պատակին հասնի, ցնծայ և ուրախանայ,
կամ ազգի ատելութիւն է լացի և սգի կը
հանդիպի: Թէ աչ պտուղը խաղայ—սրտ-
նեղութիւն է. թէ ձախը—բարի կը գտնի:
Թէ աջ ամբողջ աչքը խաղայ—շատ
բարեբի կը հանդիպի, սուողջանայ, գժւա-
րութիւնից ազատուի և հեռաւորը կը գայ: Թէ
ձախը—շատ և առատ բարեաց հանդիպի,
մեծերից պատիւ ստանայ, գանձ կը գտնի,
փառք և հարստութիւն կը վայելէ, բայց
սրտնեղի և չարանայ: Թէ աջ աչքը ա-
մեն վայրօք խաղայ—իւր հեռաւոր մար-
դուն տեսնի. Թէ ձախը—հիւանդանայ,
բայց ապրի: Թէ աջ վերին արտ և ան ուն-

քը խաղայ—իւր հեռաւոր բարեկամը գայ,
տխրի և լայ, բայց ամեն բան իր կամքով
լինի. թէ ձախը—կարևոր հեռաւորին տես-
նի և խնդայ. առողջութիւն և բարի գտնի:
Թէ աջ ներքի արտաւանդը խաղայ
լաց է սրտնեղութիւն, կամ թէ չէ մարդ-
կանցից մեծ բարիք գտնի. թէ ձախը—
լաց է և սրտնեղութիւն, բայց իր հեռաւո-
րին կը տեսնի: Թէ սկաւառակը խա-
ղայ—մեծ մարդուց պատիւ ստանայ: Թէ
քթի աջ կողմը խաղայ—քիչ հիւանդանայ
և ատելութիւնից ու նեղութիւնից ազատւի,
կուրի, վէճի հանդիպի, բայց զօրանայ և
ազատւի չարից: Թէ ձախը—որդի լինի ի-
րան, մենամարտի թշնամու հետ, բայց և
յաղթէ, հիւանդութիւնից առողջանայ
և սիրոյ հանդիպի: Թէ ամբողջ
քիթը խաղայ—մեծերից շահ ստա-
նայ: Թէ քթի ծայրը խաղայ
—պարտքից ազատւի և հարստանայ
Թէ քթի ծայրի աջ կողմը խաղայ—
ցաւի կը հանդիպի. թէ ձախը—իրան հետ
յանկարծ մարդ կուրի: Թէ աջ քթի օղը
խաղայ—մարդու հետ կը սիրահարւի. թէ
ձախը պարտքից ազատւի: Թէ քթի օղը
խաղայ—հարստանայ: Թէ երկու պին-
չը խաղայ—հարստանայ, բայց իւր ամուսինը
մեռնի: Թէ աջ ալ տը խաղայ—տրտմու-
թեան կը հանդիպի, գործ գործէ և ամաչէ

փոքր ինչ հիւանդանայ և առողջանայ և մի
տհաճոյ հանգամանքի կը հանդիպի: Թէ ձա-
խը—իրեն որդի լինի և ուրախանայ, սըրտ-
հեշտի և լիութեան հանդիպի: Թէ աջ քնա-
տեղը խաղայ—սրտնեղութիւն է, խիստ
կը հիւանդանայ, բայց կապրի. թէ ձախը—
գուժի ձայն կը լսէ և կտրտմի. ճառագարն
կը գնայ և իր բանը կը աջողւի: Թէ աջ
եքեքը խաղայ—առողջութիւն է և գանձ
կը գտնի—տեղիցը կը փոխւի և կուրախա-
նայ: Թէ ձախը—քիչ կը տրտմի և կը հի-
ւանդանայ, կը վիրաւորւի և շուտով կը
մեռնի: Թէ աջ կողմի կլափը (ծնոտը)
խաղայ—իւր ճանապարհից կը դառնայ, սըրտ-
հեշտի և շատ բարեբի հանդիպի, կամ քիչ
տկարանայ: Թէ ձախը—իւր ազգականի
հետ կուրի, հիւանդանայ, բայց ապրի բախ-
տաւոր և ուրախանայ: Թէ կզակի աջ
կողմը խաղայ—իւր ազգի հետ կը վիճի և
ապա կը կուրի. փոքր ինչ կը տկարանայ,
նեղութեան մէջ, բայց Աստուծ ամեն փոր-
ձանքից ազատ կը յանդի: Թէ ձախը—իւր
ազգականներից հեռաւոր ճանապարհորդ կը
գայ, փոքր հիւանդութիւնից կառողջանայ
և կը խնդայ: Թէ սկանջը խաղայ—ազ-
գականից լիութեան և խնդութեան լուր
կառնէ, յանկարծ բարւոյ կը հանդիպի, ա-
մենից կը սիրւի, կը շահւի և կը զւարճա-
նայ, բայց վերջը տկարանայ և կամ ազգա-

կանը մեռնի: Թէ ձախը—հեռաւորը կը գայ, օտար տեղից իրան բարի կը լիշեն, բարի զրոյց կը լսէ, յանկարծ կը խնդայ և կառողջանայ: Մեծերի աչքը վրան կը բաղցրանայ, բաղդաւորութեան կը հասնի, բայց ինքն աչք չունի: Թէ աջ ականջի դմակը խաղայ—մարդու հետ կը կուի, թէ ձախը—բարին կը յիշեն: Թէ աջ ականջի վերին կողմը խաղայ—հոգսի մէջ կնկնի. թէ ձախը—յանկարծ գանձ կը գտնի: Թէ աջ ականջի տակը խաղայ—բարի կը գտնի, բայց ինքը յոյս չունի. թէ ձախը—լաւ չէ: Թէ ամբողջ բերանը խաղայ—սրտով սիրած հեռաւորից լուր առնէ և պատիւ ստանայ: Թէ լեզուն խաղայ—կուի է և խռովութիւն, սրտնեղութեան և վշտի նշան է: Թէ լեզուի աջ կողմը խաղայ—կը հարստանայ, թէ ձախը—բարիքի կը հանդիպի: Թէ ամբողջ լեզուն խաղայ—մատնիչներէց և զրպարտիչներէց զգոյշ եղիր և պատրաստ կաց: Թէ վերին շրթունքը խաղայ—մահաւան լուր կը լսի վէճ, խռովութիւն և ատելութիւն է. կամ թէ չէ հեռաւորը կը գայ. թէ ներքինը—սրտնեղի կը վիճի և կը յաղթէ, իր նպատակին հասնի, հեռաւորը կը գայ և լաւ նշան է: Թէ շրթունքներէ երկու կողմը խաղայ—խօսք կը լսի և կը վիճի, զաւակից կուրախանայ, մարդկանցից կը

բանբասի. տրամութիւն և սուգ է: Թէ ներքին և վերին շրթունքները միաժամանակ խաղան—սիրածին կը համբուրէ: Թէ վերին շրթունքի աջ կողմը խաղայ—կուի և խօսակցութիւն լինի. սրտնեղի և սուգի մէջ ընկնի, կամ ուրախութեան զաւակ լինի. եթէ ձախը խաղայ—սէր է, խնդութիւն և խաղաղութիւն. զաւակ կուսենայ բարի և շնորհքով, որի համար էլ յանկարծ կուրախանայ. պարտքը կը վճարի և իւր սիրելին կը գայ: Թէ վերին շրթունքներէ մէջը խաղայ—կը համբուրի ումը և ցանկանայ. վատ խօսք կը լսի և կը տրամի: Թէ ներքինը—տխրի: Թէ ներքի շրթունքի աջ կողմը խաղայ—ուրախանայ, թէ ձախը—նոյնպէս ուրախանայ: Թէ շրթունքի աջ կողմը խաղայ—ինքն առողջանայ: Թէ ձախը—իրան կտրիճ տղայ լինի: Թէ բոլոր շրթութիւնները խաղան—շնորհք ստանայ: Թէ բերանի աջ կողմի կապը խաղայ—կը բարձրանայ և թշնամուն կը յաղթէ, հեռու տեղ կը գնայ և պատիւ կը ստանայ: Թէ բերանի վերի աջ կողմը խաղայ—գանձ կը գտնի, բարւոյ կը հանդիպի, բախտի և մեծութեան կը հասնի, Թէ ձախը—թշնամուն կը յաղթէ, բարւոյ կը հանդիպի, հեռաւորը կը գայ և կուրախանայ: Թէ առաստաղը խաղայ—

արամութիւն է: Թէ առաստաղի աջ կողմը
խաղայ—բարի կը գտնէ և կուրախանայ:
Թէ ձախը—փոքր ինչ հիւանդանայ, բայց
շատ շուտով կառողջանայ: Թէ աջ թուշդ
խաղայ—թշնամիներէցդ պատրաստ կաց.
Թէ ձախը—մեծ բարութիւն կը գործես: Թէ
աջ երախը խաղայ—հարստութեան նշան է.
Թէ ձախը—բախտի արժանանայ: Թէ աջ
կողմի կլապանը խաղայ—ուրախանայ և աշ-
քով շատ ու շատ բարիք տեսնի. Թէ ձախը
—բարիք կը գտնէ: Թէ կլափի ծայրը խաղայ—
ոսկու և դումաշի հանդիպի: Թէ կլափը խա-
լայ—շահի նշան է: Թէ աջ խամ ծիծը խաղայ
բախտաւորւի: Թէ ձախը—խնդայ և ու-
րախանայ: Թէ շնչափողը խաղայ սրտ-
նեղութեան զրոյց լսէ: Թէ վզի աջ
կողմը խաղայ—հեռու տեղից իրեն օգուտ
գայ, բախտի կը տիրանայ և մեծութեան
կարժանանայ այնտեղից, որտեղից յոյս չու-
նի. Թէ ձախը—մեծաւոր կը դառնայ և կը
խնդայ. մեծութիւն կստանայ, կը հարստա-
նայ, աչքովը շատ բարիք կը տեսնի և խըն-
դութեան կը հանդիպի, կամ անպէտք բան
կը գործէ. ազգիցը և մեծիցը անախորժ
խօսք ու զրոյց կը լսէ: Թէ ամբողջ վիզը
խաղայ—մեծ նեղութեան մէջ կնկնի և կեան-
քը կը պակասի: Թէ թիկնամէջի աջ կող-
մը խաղայ—սրտնեղութիւն է: Թէ ձախը

անարժան բան կանի: Թէ աջ թիակը
խաղայ—որոգայթից պատրաստ կենայ. Թէ
ձախը—ուրախանայ ամբողջ սրտով: Թէ
թիկնամէջը խաղայ—ինքը կը հարստանայ:
Թէ անթափակը (թևի տակը) խաղայ—իւր
ձեռքի գործից կը բախտաւորւի. Թէ ձախը
—մեծութեան կը հանդիպի, խնդութեան և
սիրոյ նշան է: Թէ աջ բէձը (կռան յետևը)
խաղայ—հարստութեան, ցնորքի կամ տըրտ-
մութեան նշան է. պատրաստ կաց չարից
և կնոջից: Թէ ձախը—առողջութիւն է: Նոր
բան կը հագնի, իրեն բարիք կը գայ, կամ
Թէ չէ անվայել բան կը գործէ: Թէ աջ
թիկունքը խաղայ—նոր շոր կը հագնի:
Թէ ձախը—իր մուրազը կը կատարւի:
Թէ աջ ծղիկը խաղայ—գլխացաւով կը հիւան-
դանայ, սակայն շուտով կը լաւանայ, Թէ
ձախը—խնդայ և ուրախանայ. ընկերից ինչ
որ բարիք ցանկանայ կը գտնի: Թէ աջ ար-
մունկը խաղայ իր սրտի սիրածին կը հանդիպի.
լաւ է և բարի, այլ և արքունի գործի մէջ
կը մտնի, բիշ կտկարանայ, գլուխը կը ցա-
ւի, սակայն շատ շուտով կը լաւանայ. Թէ
ձախը—բարի է և խնդութիւն. հիւր կը գա,
կամ օտարից կը վերաւորւի և կը հիւան-
դանայ: Թէ աջ բազուկը խաղայ—կնոջից
կը սիրւի, ուրախութեան կը հասնի և իւր
սիրածին կը գտնի: Թէ ձախը—մեծ բարիքի
և շահի կը հանդիպի, մարդկանցից պատիւ

Կը ստանայ և բախտ կը գտնի: Թէ աջ թիւը
 խաղայ—հեղութեան կը հանդիպի. թէ ձա-
 խը բանտ կնստի: Թէ աջ բազուկի ձուկը
 խաղա—գլխացաւութեան կը հանդիպի. թէ
 ձախը—իւր ընտանիքի մասին բարի գրոյց
 լսէ և ամեն ինչ լաւ կը լինի: Թէ աջ ձեռ-
 քի թաթը խաղայ—մեծ է և աղմուկ. մարդ-
 կանցից վիրաւորանք կստանայ: Թէ ձախը—
 բարի կը գտնէ. արծաթի, ոսկոյ և գանձի
 կը հանդիպէ, մեծամեծներից բան
 կառնէ, կամ մարդկանց հետ կը վիճի: Թէ
 աջ ափը խաղայ—բարի գործի կը հանդի-
 պի, կամ կը կուրի և կաղաղակէ: Թէ ձախը—
 շատ բարիքի հանդիպի կամ թէ չէ արծաթ
 կը շահի: Թէ աջ բութ մատը խաղայ—մեծ
 մարդուց սիրւի և ոռճիկ ստանայ և յան-
 կարծակի բարիք գտնէ, ազգականները կամ
 եղբայրները իրանով կխնդան: Թէ ձախը—հա-
 րստութիւն է և փառք, բարիքի և գանձի կը
 հանդիպի, ինչ որ ուզի այն էլ կառնի, իւր
 մասին սուտ բան կը խօսեն, որի շնորհիւ
 մեղքի մէջ կնկնի: Թէ աջ ցուցամատը խա-
 ղայ—չարի կը հանդիպի, վատ խօսք կը լսի
 մարդկանցից կը բանբասուի և իզուր կը վի-
 րաւորւի. թէ ձախը—բարի է և ուրախութիւն,
 բարի խորհուրդ կը խորհի, կորցրած խիղճը
 կը գտնէ, գովասանք կը լսէ, ինչ նպատակ
 որ ունի կը կատարւի: Թէ աջ միջի մատն
 խաղայ—վիճաբանութեան մէջ կնկնի և հա-

կսռակորդին կը յաղթէ, ինքը մեծերից բախ-
 տաւորութեան կարժանանայ: Թէ ձախը—
 կուրի և սրտնեղութեան նշան է, կը վիճի
 և կը յաղթէ. տրտմութիւնից կազատւի,
 բան կգտնի և կխնդայ: Թէ աջ մատանու
 մատը խաղայ—կը հարստանայ և կը շահի,
 խնդրածքը կը կատարւի, իր հեռուոր սի-
 րելին կը գայ: Թէ ձախը իւր բարին կը
 յիշեն, մեծերից կը պարգևատուի, սրտով
 կուրախանայ և իր նպատակին կը հասնի:
 Թէ աջ ճկոյթը խաղայ—մեծ բախտի կը
 հանդիպի, գանձ և հարստութիւն կը գտնի,
 իզուր տեղը կամբաստանւի բայց կազատւի:
 Թէ ձախը—վէճ է և աղաղակ, վատ խօսք
 կը լսէ իր մասին, կամ թէ չէ կը բարձրա-
 նայ և կը հարստանայ: Թէ աջ ձեռքը խա-
 ղայ—մեծերից պատիւ կստանայ կհարստա-
 նայ և կը խնդայ, կամ թող չարից պատ-
 րաստ մնայ: Թէ ձախը—յոյս չունեցած
 տեղից բարիք կը գտնէ, մեծ մարդուց պա-
 տիւ կստանայ, թագաւորից պարգև ու շահ և
 ապա կը հարստանայ: Թէ աջ ձեռքի բոլոր մատ-
 ները խաղան—կը տրտմի կսրտնեղի, բայց
 յետոյ չարը կը հեռանայ իրանից և ամեն
 ինչ լաւ կը լինի: Թէ աջ ձեռքի վերին թա-
 թը խաղայ—նախանձները կզրպարտեն ի-
 րեն, բայց յաղթել չեն կարող: Թէ աջ ուսը
 խաղայ—առողջութեան նշան է և նոր հա-
 գուստ կը հագնի. թէ ձախը—կը խնդայ

Աստուածանից շնորհ կատանայ և մեծերից
կը պարգևւի: Թէ աջ ծիծը՝ կը բախտաւորւի
և կուրախանայ, սիրելիները կը բազմանան
և ծանօթները կը լիանան. Թէ ձախը—հե-
ռաւոր բարեկամին կը տեսնի և աւամայից
կը վերաւորւի և կը դժւարանայ: Թէ կրծ-
քի աջ կողմը խաղայ—բարւոյ կը հանդիպի
չարից կազատի, բախտի և մեծութեան կը
հասնի, անարժան գործ կանի և շատ կը զրդ-
ջայ: Թէ ձախը—ամենքը կսիրեն իրան, այն
չարը, որ գալու է Աստուած կը հեռացնի
իրենից: Թէ ամբողջ կուրծքը խաղայ—սի-
րածին արժանանայ, և լաւ համբաւի աւե-
աիք է, կը հարստանայ և սէր կը վայելի:
Թէ սրտի աջ կողմը խաղայ—կշատանան իր
սիրելիները և կուրախանայ: Թէ ձախը—
տրամութեան կը հանդիպի: Թէ սիրտը խա-
ղայ—սրտնեղութիւն է և հոգս: Թէ աջ թևի
ներքևի կողմը խաղայ—օտար երկիր կը
մեկնի: Թէ ձախը—կհիւանդանայ և շուտով
կառողջանայ: Թէ կողերի աջ կողմը խա-
ղայ—շահի կը հանդիպի և ճանապարհ կը
գնայ. փոքր ինչ կտկարանայ, բայց շուտով
կառողջանայ: Թէ ձախը—իրեն որդի կը
լինի և կամ ճանապարհ կերթայ: Թէ աջ
ոտը խաղայ—կին կանի և ուրախութեան
զաւակ կը լինի: Թէ ձախը—դարձեալ նոյնն
է: Թէ մէկ ոտը խաղայ—շատ լաւ է: Թէ
աջ կամ ձախ մսանը (սուկին) խաղայ—

կը մեծանայ: Թէ փորի աջ կողմը խաղայ—
կը մեծանայ և կը բախտաւորւի: Թէ ձախը
—շատ կը լայ և կտխրի: Թէ ամբողջ
փորը խաղայ—ինչ Աստուածանից խնդրէ
կատարւի: Թէ աջ կողը խաղայ—հիւանդու-
թիւնից կազատւի: Թէ ձախը—ճանապարհ
կը գնայ: Թէ կողերի աջ և ձախ կողմերը
խաղան—շատ բարի է: Թէ պորտը խաղայ—
բարիքը կը շատանայ, հոգսերից կազատւի
կին կանի և կը խնդայ: Թէ փոքր փորի աջ
կողմը խաղայ—կը հարստանայ: Թէ ձախը
—կը բախտաւորւի և թշուառութիւնից կա-
զատւի: Թէ ամբողջ փոքրափորը խաղայ—
բարի զրոյց կը լսէ և կուրախանայ, կշատանայ
կարողութիւնը, մի բարի կնոջ կը հանդիպի
և կուրախանայ: Թէ երանքը խաղան—մե-
ծերից մեծ բարիք կը լինի, ինչ որ ուզէ
կանի, Աստուած խնդրածը կը կատարէ և
իրան արու զաւակ կը լինի: Թէ երանքի աջ
կողմը խաղայ—կը հարստանայ: Թէ ձախը—
մեծանայ և ուրախանայ: Թէ վարոցի ծայրը
խաղայ—տունը կը քանդուի, կամ մեծ դժ-
բախտութեան կը հանդիպի: Թէ վարոցը
խաղայ—խնդութիւն և ուրախութիւն է: Թէ
աջ ձուն խաղայ—կը հարստանայ և կծերա-
նայ՝ իւր կամքը կը կատարւի: Թէ ձախը—
օտար կնոջ կը մօտենայ, իրան որդի կը
լինի, պատիւ կտանայ և կուրախանայ: Թէ
երկու ձուն միասին խաղան—շնորհաւոր

որդի կըլինի: Թէ աջ ձևատակը խաղայ—
անյուսակը տեղից պարզե կատանայ. թէ ձա-
խը—ուժ որ ուզի կառնի, կուրախանայ և
կամ սրտնեղութիւն է: Թէ ցայլքը (աճուկը)
խաղայ—կնոջ հետ կննջէ և իւր նպատա-
կին կը հասնի, իր խորհուրդը կը կատարւի
և գործը կը յաջողւի: Թէ աջ ցայլքը խա-
ղայ—իւր գործովը կը բախտաւորւի. թէ
ձախը—մեղքի մէջ կնկնի: Թէ նստատեղին
դէպի ձուն խաղայ—մեծ չարիքի կը հանդի-
պի, իր բոլոր ունեցածը կծախսի, սուգի
կը հանդիպի և անպայման կը տրտմի, բայց
Աստուծով կազատւի: Թէ ձախը—իր վրայ
կը բամբասեն, մարդկանցից բարիք կատա-
նայ, բայց չի շահւի: Թէ նստատեղու ներ-
քը խաղայ—անյոյս տեղից կշահւի: Թէ աջ
անդամը խաղայ—բարի է և ուրախութիւն,
ցնծայ և ուրախանայ, բայց տրտմութիւն
էլ է: Թէ ձախը—բարի է, Աստուծով կուրա-
խանայ, նոր հագուստ կը հագնի և կխնդայ.
կամ մարդ կթշնամանայ իւր հետ, պէտք է
զգոյշ լինել: Թէ անդամի դրսի կողմը խա-
ղայ—զօրութիւն է: Թէ աջ անդամի դրսի
կողմը խաղայ—կը մեծանայ և շատ կը բարձ-
րանայ. թէ ձախը—մեծ բախտի կը տիրա-
նայ: Թէ աջ անդամի ներսը խաղայ—սըրտ-
նեղութեան կը հասնի. թէ ձախը—հանգըս-
տութիւն է: Թէ աջ ծունկը խաղայ—մեծա-
ւորի մօտ կը փնայ, մեծութիւն, պատիւ

կատանայ և կամ կը վիճի ու դատարան
կերթայ: Թէ ձախը—մեծաւորի մօտ կը
գնայ, կը բախտաւորւի և կամ վատ խօսք
կլսէ: Թէ աջ ծնկան դրսի կողմը խաղայ—
իրեն կմատնեն, բայց կազատւի. թէ ձախը
—խակոյն կը փրկւի: Թէ աջ ծնկան ներսը
խաղայ—աւետիս կը լսէ. թէ ձախը—դա-
տաստան է, կուրախանայ և կը խնդայ: Թէ
սրունքները խաղան—հարստանայ և մեծե-
րից գովասանք ստանայ: Թէ աջ ամբողջ
սրունքը խաղայ—իւր սրտի երկիւղն անցնի:
Թէ ձախը ամեն նեղութիւնից ազատւի:
Թէ աջ սրունքի ոլոգը խաղայ—լաւ նշան
է, կը վիճի և բարի կը գտնի, մեծաւորի կը
մօտենայ պատիւ կատանայ, կամ իւր մտե-
րիմներից կմեռնի: Թէ ձախը—թշնամուն կը
յաղթէ և կամ սուգ է ու տրտմութիւն,
բայց յետոյ բարի է: Թէ աջ ոլոգի ներսը
խաղայ—սգոյ և լացի կը հանդիպի, իւր սի-
րելին կը մեռնի և կտրտմի: Թէ ձախը—իւր
մասին կխօսեն, խնդութիւն է. սիրելիներից
ուրախ լուր կառնէ: Թէ աջ կոճի դրսի
կողմը խաղայ—լաւ չէ. թէ ձախը—հան-
գատութիւն է: Թէ աջ կոճի ներսի կողմը
խաղայ—մեծ մարդուց պարզե կառնի և
բարի է. թէ ձախը—անհափ ուրախանայ:
Թէ աջ ոտի թաթը խաղայ—կուրախանայ և
Աստուծով իր գործում կը հաստատուի, ճա-
նապարհ կը գնայ և ուրախ կը վերադառ-


նայ, մեծ մարդու մօտ կը գնայ և կը փա-
ռաւորւի: Թէ աջ կրունկի ջիւը խաղայ—
օտարից զրոյց կը լսէ: Թէ ձախը—հարըս-
տութիւն կը գտնէ և կուրախանայ: Թէ աջ
ոտի նրբանը խաղայ—ճանապարհ կերթայ,
վէրք կստանայ, ազգականի համար կտրտմի
բայց յետոյ կազատուի, բան կը գտնէ կրհա-
րստանայ և կուրախանայ: Թէ ձախը—մե-
ծերից իշխանութիւն և պատիւ կառնէ իր
գործը կը յաջողի կմեծանայ և կը հարստա-
նայ: Թէ աջ ոտքի ամբողջ թաթը խաղայ—
ազգականներից կը հեռանայ կամ ճանա-
պարհ կը գնայ, իշխանութիւն կը գտնէ և
կօգտուի: Թէ ձախը—ազգականներից կը հե-
ռանայ կը տրտմի, փոքր ինչ կհիւանդանայ,
բայց կապրի, ճանապարհ կերթայ պատիւ և
իշխանութիւն կառնի ու կբարձրանայ: Թէ աջ
ոտքի վերին և ներքին երեսները խաղան—
արդիւնաւոր ճանապարհ կը գնայ, մեծու-
թեան կը հասնի, յանկարծ կը հարստանայ
և կուրախանայ: Թէ ձախը—ոռճիկ կստա-
նայ, կըխնդայ ճանապարհին, սէր և բարձ-
րութիւն է: Թէ ոտքի մէջը խաղայ—մար-
դու հետ կը կիճի և մի լաւ կծեծուի: Թէ
աջ կրունկի վերին մատը խաղայ—օտարու-
թիւն կերթայ և բարի զրոյց կը լսի: Թէ
ձախը՝ չարիքի մէջ կնկնի: Թէ աջ կրունկը
խաղայ—մեծութիւն է կամ իրան կը
մատնեն, բայց կրկին կազատուի: Թէ

ձախը—կարողութիւն է. նաև ուրախա-
նայ և խնդայ: Թէ աջ ամբողջ ոտքը
խաղայ—ճանապարհ կը գնայ. թէ ձախը
—այնտեղից, որտեղից յոյս բուրբուկին
չունի բարիք կստանայ: Թէ աջ ոտքի
բութ մատը խաղայ—իրենից տրտմութիւնը
կը հեռանայ. Թէ ձախը—առողջութիւն է
անձին, հեռաւորին կը տեսնէ, Աստուծով
կը բախտաւորուի և կխնդայ, բոլորը կսիրեն
իրան, կամ թէ չէ ցաւի կը հանդիպի և
սաստիկ կը հիւանդայ: Թէ աջ ոտի բթա-
մատի մօտ եղող ցուցամատը խաղայ—կըհի-
ւանդանայ մերձիմահ, կըտրտմի և կը վախե-
նայ, բայց յետոյ բարի կը լինի. փորձանքի
մէջ կնկնի, բայց կազատուի: Թէ ձախը—հա-
րստութեան, մեծութեան և խնդութեան կը
հասնի, կամ սուտ խօսքից կըվիրաւորուի և
կըտխրի: Թէ աջ ոտքի միջամատը խաղայ—
սրտեղութեան նշան է, վշտի և տրտմու-
թեան մէջ կնկնի, մեծ փոթորիկ կը լինի
կծեծուի, և չարի կը հանդիպի: Թէ ձախը—
նոյնն է, կամ թէ չէ շատ մեծ բարիքի հան-
դիպի և ուրախանայ: Թէ աջ ոտքի ձագ
մատը խաղայ—սրտի ուղածին գտնի, սիրուի
և պատիւ ստանայ. կամ կը վիճի ծանօթի
հետ և թշնամիները կը շատանան. թէ ձա-
խը—հեռանայ տանից, որդիներից կը բա-
ժանուի, օտար երկիր կերթայ և մեծ յաջո-
ղութեան կը հանդիպի, բայց կանայք կը

բամբասեն իրան: Թէ աջ ոտքի ճկոյթը խաղայ—Աստուած մեծութիւն և հարստութիւն կտայ, մեծամեծներից շնորհք կտանայ, մեծ բախտի կը հանդիպի կամ մի բան կը կորցնի. Թէ ձախը—տրտմութիւն է, կռիւ և չար. կամ Թէ չէ առողջութիւն է և բարիք: Թէ աջ ոտքի բոլոր մատները միաժամանակ խաղան—ոտքով ճանապարհ կը գնայ. բարի է. խնդութեան և սիրոյ կը հանդիպի. Աստուածանից պարգև կառնի, հեռաւոր երկրում օտարի հետ կծանօթանայ, բարւոյ և պատւի կը հանդիպի: Թէ ձախը—շատ վատ նշան է: Թէ կոնակի տափակ տեղը խաղայ—խնդայ, ձի հեծնի և բարի ճանապարհ գնայ:



ԲԱՂԴԱԳՈՒԾԱԿ ԸՍՏ ՍՈՂՈՄՈՆԻ



Բ Ա Ղ Դ Ա Գ Ո Ի Հ Ա Կ

Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.
Զ.	Է.	Ը.	Թ.	Ժ.
Ի.	Լ.	Խ.	Ծ.	Կ.
Հ.	Ձ.	Ղ.	Ճ.	Մ.
Յ.	Ն.	Շ.	Ո.	Չ.
Պ.	Ջ.	Ռ.	Ս.	Վ.
Տ.	Ր.	Յ.	Խ.	Փ.

Ք.



Ա

Ամենասուրբ Երրորդութիւնը քեզ կը փրկէ ամեն տեսակ փորձանքից, քո սրտից աւր կը փարատուի. Աստուծոյ մեծ ուրախութիւն և շնորհք կը գտնես և մեծ պատուով կը բարձրանաս:

Դու, երբ քո ծնողներից ընծայւեցար — մեծ հիւանդութիւն կրեցիր ու հալածական եղար քո ազգականներից և բարեկամներից: Քեզ պատրաստ պահիր թէ գազաններից և թէ վատ մարդկանցից, որովհետեւ առաջդ փորձանք կայ և քո մասին չարախօսողները շատ են: Գնա և աղօթիր, որ ազատես չարից: Մտածմունքներդ և խորհուրդներդ բարին կը կատարուի: Քեզ օգնողը Աստուած է, ուստի և չես վնասուիլ փառք տուր Նրան:

Բ

Բանն Աստուած, որ մեծ յոյս է նեղեալներին քեզ ևս կը փրկէ ամեն նեղութիւնից և ամեն փորձանքից: Քո սրտի նեղութիւնը կը փարատուի, վիճակդ աւելի կը բարւոքուի,

ինչ բան, որ սկսել ես Աստուած կաշողեցնի. ուստի ինչ մտադիր ես արա. թէ առևտուր անես կը շահես, թէ ճանապարհ գնաս ողջութեամբ և յաշողութեամբ յետ կը դառնաս, թէ հեռաւոր տեղում մարդ ունիս — կարժանանաս նրա տեսութեանը, թէ հիւանդ ունիս շուտով կառողջանայ. ինչ կորցրել ես կը գտնես:

Գ.

Գնա, ոչինչ մի հարցնիլ, որովհետև շատ նեղութիւն ունիս. քո առաջ տրտմութիւն կայ. մաւան վիշտը քեզ տրտմեցրեց և քեզ մեծ նեղութիւն հասաւ ու բարեկամ և օգնական չգտնեց: Քո հայրական ժառանգութիւնից զրկւեցար և այժմ ապագայիդ վերաբերմամբ տարակուսանքի մէջ ես: Արդ աղաչիր Աստծուն, որ կործանէ թշնամուդ, քեզ նեղութիւնից ազատէ և քո սրտի ցանկութիւնդ բարին կատարէ: Վերջապէս եթէ երգւիս ծխախոտ չըքաշել, անպատճառ կազատես ցաւերիցդ և մեծ բաղդաւորութիւն կը գտնես:

Դ.

Դու, ով սիրելի, այդ բանի համար միշտ հարցնում ես և մտածում. բայց Աստուած կը փրկէ քեզ ամեն տեսակ նեղութիւնից և

յանկարծ անսպասելի կերպով կհարստանաս այնպիսի տեղից, որ բոլորովին յոյս չունես և կը բացւի քո բախտի դուռը: Թշնամիներիդ ամօթով կմնան. հեռաւորիդ կտեսնես. չնայելով, որ մահը քեզ տրտմեցրեց, բայց շուտով կուրախանաս: Կամենում ես տեղիցդ ուրիշ տեղ փոխել, մի քիչ համբերիր և ապա փոխւիր, որ բարիք գտնես: Բարով կը պսակես, շատ զաւակներ կունենաս, կը մեծանաս և կուրախանաս: Յոյսդ Աստուծոյ վրայ դիր քեզ բնաւ վնաս չի հասնիլ: Քո տան կործանման պատճառը թղթախաղն է լինելու, զգուշացիր թղթախաղից՝ ինչպէս սև օձից:

Ե.

Երանի քեզ ով սիրելի, որ Աստուած քեզ օգնական է, բայց դու շատ ես աշխատել և հանգստութիւն չես գտել ու քեզ ոչ եղբայրդ և ոչ սիրելիներդ են օգնել: Յաւերի ծովի մէջ մինչև օրս ծփում ես և հանգիստ չես գտնում ով սիրելի, Աստծուն փառք տուր, որովհետև քեզ հասնելու է մեծ ուրախութիւն, մեծ առողջութիւն և այնպիսի բախտ ու հարստութիւն, որով բոլոր դժւարութիւններիդ դէպի բարին են դառնալու: Բայց մեծերիցդ և ընկերներիցդ պատրաստ կաց. քո դէմ որոգայթներ են լարում: Յան-

կարծամահ կը լինես, եթէ արքեպիսկոպոստին
ձեռք չվերցնես և քեզ չպահես:

2.

Զարմանում եմ քեզ վրայ, սվ մարդ,
միթէ անցեալ վիճակդ չես յիշում, որ ներկադ
խոհեմութեամբ կարգաւորես: Աջ և ձախ
ապտակում ես, իմացած եղիր, որ վերջը
լաւ ապտակ կուտես: Մեծանալու համար
ես մտածում, միայն չես ուղում կատարել
Աստուծոյ խօսքը, որ ասում է. «Հեզ եղէք,
անյիշաշար եղէք». իսկ դու հստեղ ես սա-
տանի ձիուն քո էջն ես քշում, ուստի, ըն-
կնելու ես բարձրութիւնիցդ: Քիթդ կեռ
անցրած կը տանեն և քո այդ ստոր վիճակի
մէջ պար կածեն և վրադ կը ծիծաղեն,
ուրեմն քանի վաղ է, բնաւորութիւնդ փո-
խիր, ամբարտաւանութիւնդ մի կողմ դիր,
որ կրկին մարդկանց կարգն անցնես, ապա
թէ Յոշ' վնայ քեզ:

3.

Ենն Աստուած քեզ հետ է. կառնես ինչ
որ մտածում ես, ուրախ կը լինես և կա-
ղատես չարից ու փորձանքից: Շնորհակալ
եղիր Ածածուց որ հանեց ամեն ներութիւնից
ու որոգայթից: Որովհետեւ դու բարի ես կա-

մենում, ուստի Աստուած քո բոլոր գործերը
կըյաջողեցնի—որին ցանկանում ես—կըտես-
նես, ինչ որ կորցրել ես կը գտնես, թէ
հիւանդ ունես կառողջանայ, թէ տուն շի-
նես կամ երկրագործութեամբ պարապես
բարի կը գայ և շատ արդիւնաւոր կը լինի:
Կախարչներից պատրաստ կաց. մեծերիդ
հաւատարիմ ու խոնարհ եղիր, բայց եթէ
ուզում ես այդպիսի լաւ վիճակում մնալ՝
եկեղեցի գնահ և աղօթք արա:

4.

Ընդունեցիր չարութիւնը ոչ թէ ուրի-
շից, այլ քո հաւատարիմ ընկերովիցը, քո հացն
ուտողից: Քեզ համար դժւար պայմաններ
ստեղծեց, քո ազգականների և բարեկամ-
ների վատ գործերից տրամեցիր. քո սի-
րելիները քեզ ծաղրեցին, քո տանը աւերում
եղաւ ու երկրի վրայ տխուր շրջեցիր:
Այժմ գոհացիր Աստուծոց, որովհետեւ քեզ
վրայ մեծ ուրախութիւն է գալու, մեծ վի-
ճակի, մեծ բախտի և ուրախութեան ես
հանդիպելու: Ում որ ուզես կը տեսնես, թէ
ճանապարհ գնաս բարով յետ կը դառնաս,
ինչ գործ բռնես, Աստուած կը յաջողի: Այն
ուխտը, որ խոստացել ես Աստուծուն կատա-
րիր, Ս. Էջմիածնին ոսկեղէն թանկագին
ընծայ տար, որ բախտիդ պտուղը մինչև

մահդ վայելես, ապա թէ ոչ յանկարծ ամենիցը կզրկւես և դատարկ կմնաս:

Թ.

Թոյլ և ծոյլ ես. բարութեան մէջ առաջ չըգնացիր. ինչ որ ունէիր — նրանից զրկւեցիր քեզ օգնական չկար, ոչ եղբայր և ոչ սիրելի: Բայց դու քո ասածի ես, աղօթք չես առնում և եկեղեցի չես գնում. Ուստի դրա համար դու նեղութեան մէջ ընկար, օտար երկիրներ շրջեցիր, բայց չվնասւեցար: Եթէ դէպի բարին չդառնաս, քո վրայ Աստուած կը բարկանայ, քո հարստութիւնը կը հափշտակեն, տունդ կաւերւի, քո ձեռքի գործը չի յաջողւիլ. ում ցանկանաս չես տեսնել, ինչ որ կորցրել ես չես գտնիլ: Իսկ եթէ դառնաս դէպի Աստծոյ ուղիդ ճանապարհը, նա քո առաջ փակած դուռը կը բանայ՝ իր բարիքը կաւելացնի: Գնա, աղօթք արա Աստծուն և ուխտդ կատարիր, մոմեր վառիր, որ տանջանքիցդ ազատւես:

Ժ.

Ժամ առ ժամ առաքինութիւններդ աւելացնում ես, ուստի քո ձեռքում ինչ բան որ ունես Աստուած կը յաջողի. այս է քո սրտի խորհուրդը: Աւետիս տուր քո անձին,

որովհետեւ ձեռքիդ գործովը անշափ ուրախանալու ես և մեծ օգուտ ու շահ ես գտնելու: շատերը քո ձեռքի վաստակը կուտեն: Դու շատ ծանր հիւանդացար, նոյնիսկ մերձիման եղար, բայց Աստուած քեզ նեղութիւնից ազատեց: Հեռաւոր տեղից, որ բոլորովին յոյս չունես քեզ բարիք է գալու, քո տըրտմութիւնը ուրախութեան կը փոխւի. դու բարի ես կամենում Աստուած էլ քեզ դէպի բարին կառաջնորդէ. քեզ մի շատ գեղեցիկ և բարի տղայ կըլինի: Գնա Աստծուն աղաչիր և երուսաղէմի ս. Յակովբեանց վանքին մեծ ուխտ կատարիր, որ իր ողորմութիւնը միշտ քո վրայ լինի: Թէ ճանապարհ գնաս բարով յետ կըգաս և բարիքի կը հասնես:

Ի.

Իմաստունի պէս աշխատասէր եղիր. եկեղեցի գնա, միշտ աղօթիր, որ քո տըրտմութիւնը ուրախութեան փոխւի: Հեռաւոր տեղից աւետեաց ձայն կլսես կամ հեռաւոր մարդ կը տեսնես և Աստուծով առողջութիւն կը գտնես, տեղից տեղ փոխւելը քեզ յաջողութիւն կը բերի, կառողջանաս կը կազդուրւես, ամեն դժուարութիւնից կազատւես և ինչ նպատակ որ ունես, ինչ գործ որ կամենաս անել, աներկիւղ գնա և արա իմացած եղիր, որ մեծ արդիւնք կունենաս և քո առևտուրդ լաւ կը լինի:

Լ.

Լոյսից փախչում ես խաւար ես սիրում,
անա տեսնում եմ քեզ և քո խորհուրդը
որ դու նմանում ես ծովի ալիքներին և
ինչպէս ճնճողուկ, որ ընկնում է որսորդի
ձեռքը, դու էլ նմանապէս կնկնես բռնաւոր-
ների ձեռքը: Իսկ եթէ յետ չդառնաս քո
չար գործերից, դու նեղութիւն կը քաշես
և տունդ կը յափշտակւի: Դու կը հալած-
ւես և մահաւան ցաւը քեզ կտրտմեցնի, օ-
տար երկիր կերդաս: Գնա Աստուծուն աղա-
չիւր, որ քեզ փրկի այդ անյուսալի վիճակից
և նեղութիւնից: Աղօթքով և եղբայրների ոգ-
նելով կարող ես քեզ լոյս աշխարհ դուրս
բերել և կրկին քո նախկին փառքին տիրա-
նալ:

Խ.

Խաղաղարար ես դու հիւ մարդ, և այդ
պատճառով Աստծոյ ողորմութիւնը կը լինի
քո վրայ—քո ամբողջ կեանքիդ մէջ: Դու
օտար աշխարհ եթէ գնաս այնտեղ կը բախ-
տաւորւես, որին որ ցանկանաս—կտեսնես,
ինչ կամենաս կանես, ինչ որ կօրցրել ես—
կը գտնես, քեզ Աստուծ շատ շնորհք է
տւել: Դու կունենաս երեք տղայ և երկու

աղջիկ, բոլորն էլ սիրուն և քնացող: Մահը
տրտմեցրեց, իսկ Աստուծ ուրախացրեց: Ինչ
խորհուրդ որ ունես գնա արա, կը շահես
և բարի կը գտնես: Քո աշխատանքից շա-
տերը կուտեն: Աստծուց և թագաւորից պա-
տիւ կառնես—չը հպարտանաս, բերանիցդ
հայհոյեանք չըհանես, կախարդների չդիմես,
որ Աստուծոյ բարիքը մինչև մահդ վայելես,
ասլա թէ ոչ բոլորից յանկարծ կը զրկես:

Ծ.

Ծովի նման է քո հասկացողութիւնը
հիւ մարդ, թէև դու քո հայրենական ժա-
ռանգութիւնից զրկեցիր, ծնողներիցդ չը-
խնդացիր, դժբախտ ես, որովհետև ամեն
մարդ քեզ զրկել է: Ուստի աղաչիր Աս-
տծուն և ուխտ կատարիր Մայր Աթոռին,
որ օգնէ և փրկէ քեզ: Քո առաջ մեծ փառք
եմ տեսնում. այս ինչ մեծ բախտ է, որ
զալիս է քեզ. անա քեզ աւետեաց ձայն կը
զայ և դու կը խնդաս.—կուրախանաս, յան-
կարծ կը հարստանաս և կը արձրանաս ու մեծ
պաշտօն ձեռք կը բերես: Այս չէ բո-
լորը. քեզանից մի իմաստուն զաւակ կը
ծնի, երկար կեանք կունեայ և քո ամենա-
մեծ մխիթարութիւնը կը լինի:

Լ.

Կամակոր ես դու ով մարդ, քո վայրենի բնութիւնը մեղմացրու, խոնարհ եղիր, խրատները լսիր, բաղցածներին հաց տուր և ծարաւներին ջուր: Եթէ քո կամքից չգառնաս, մեծ նեղութեան մէջ կնկնես, տունդ կը կործանւի, ինչ գործի ձեռնամուխ լինես՝ չի յաջողւիլ և ինչ ցանկանաս չես հասնիլ, ինչ կորցրել ես չես գտնիլ: Եթէ Աստծու ճանապարհին դռնաս և Նրա պատւիրանները պահես՝ Նրա ողորմութիւնը քո վրայ կը լինի, մեծ մարդկանցից կը հարստանաս և քո փառքը կը շատանայ:

Զ.

Հաւատով ես դու ով մարդ, աչքդ լոյս, դու ամենքին բարի ես կամենում. Աստուած քեզ միշտ բարին կառաջնորդէ ու կը փրկէ քեզ ամեն որոգայթից: Կունենաս 4 տղայ, կը լինես ամենքի ցանկալին, քո հարստութեանը վերջ չի լինիլ. այլև Աստուած քեզ կտայ փառք և մեծութիւն: Ուրեմն միշտ եկեղեցի գնա, աղօթք արա, որ շարունակ վայելես Աստծոյ ողորմութիւնը: Աստծոյ համար տուն չինիր, որ քո տունը յաւիտեան հաստատ մնայ:

Զ.

Ձայն, բայց ինչ ձայն եմ տալիս քեզ ով մարդ. դու քո ազգականներից և շատ բաներից զրկւեցար. քո հայրենի տունը աւերակ դարձաւ և դու երկրիս վրայ թափառական շրջեցիր. մահը քեզ տրամեցրեց, որից օգնութիւն էիր խնդրում երեսը քեզանից յետէր դարձնում: Այժմ փառք տուր Աստծուն, որովհետեւ քո վիճակը փոխւեց և քեզ մեծ ուրախութիւն է գալու: Դու յանկարծ հարստանալու ես. կը շատանայ քո կարողութիւնը, ոսկին և արծաթը: Թէ հեռաւոր ունես կը գայ, և ինչ խորհուրդ որ ունես կը կատարւի: Ուստի քո հարստութիւնից ազգիդ և հայոց Մայր Աթոռին եթէ բաժին հանես — այնուհետեւ քո հարստութեանը վերջ չի լինիլ. ուրախ կաց:

Դ.

Ղամբարափայլ լոյսը քեզ վրայ ծագեց. քո կապանքներին արձակումս տրեցաւ. ինչպէս որ մոգերն արեւելից ելան և եկան Քրիստոսին գտան և ուրախացան նոյնպէս և դու կուրախանաս քո գործերով և նպատակներիդ իրագործումով: Եթէ ու-

դուժ ես ճանապարհ գնալ գնա, բարով
կվերադառնաս և բարի կը գտնես: Ինչպէս,
որ Մովսէս մարգարէն Փարաւոնին և եգիպ-
տացիներին յաղթեց, նոյնպէս և դու կը
յաղթես քո թշնամիներին. ինչ խորհել ես
գնա և արա: Եթէ կամենում ես նշանել
հարսնացուդ Աստուծոյ ընտրածն է, դու
նրա հետ բախտաւոր կապրես: Աստուծ
քեզ դէպի բարին կառաջնորդէ և շատ էր
կը հարստանաս միայն յիշիր ազգիդ և եկե-
ղեցուդ:

Ծ.

Ճշմարիտ է դու քո մանկութիւնից
հալածական եղար և պանդխտութիւն
կրեցիր, ազգերից և անօրէններից վախե-
ցար, բայց մի տխրիր հասել է քեզ համար
մեծ ուրախութեան օրը և քո դրութիւնը
կը բարւոքւի: Ի՞նչ որ խնդրես Աստուծոն—
կստանաս, եթէ ճանապարհ գնաս. բարով
յետ դառնաս:

Մ.

Մարդ ես թէ կին ես, շատ վատն ես,
նենգաւոր ես, նախանձոտ և մատնիչ. ամեն
բանի վնասուում ես և զրկուում ես ինքդ էլ:
Ազան ես, տնաքանդ ես, չարութիւնդ քեզ-

նից հեռացրու. ընկերներիդ մասին չար մի
խորհիր, որ մեծ նեղութեան մէջ չնկնես: Մեծ
պատիժ կայ քո առաջ: Ծնողներից և զաւակ-
ներից չխնդացիր, որովհետեւ բոլորն էլ քո
հոգին ունէին: Ինչ գործի էլ ձեռք տաս—
քեզ չի յաջողւիլ. իսկ եթէ դառնաս դէպի
Աստուծոյ կամքը. ընկերներիդ և մարդկանց
նենգութիւնն չանես՝ Աստուծ իր ողորմու-
թեան նշոյլը կը ծագէ քեզ համար,
որով քեզ վրայ եկող մեծամեծ պատիժները
կը թեթեւնայ:

Յ.

Յոյսդ դրել ես Աստուծոյ վրայ, այդ
պատճառով էլ քեզ աւետիս կտամ, որ վի-
ճակդ բարին կատարւի: Մի մեծ հարստու-
թիւն ես ժառանգելու, տարին քո բախտի
յաջողութեան տարին է. երանի քեզ նշան-
նելու և պսակելու մտադրութիւն ունես.
մի տարակուսիր և մի վախենար, գնա արա,
որովհետեւ քո խորհուլը բարին է կատար-
ւելու: Ինչպէս որ լուսինը խաւար գիշերն
է լուսաւորում, այնպէս էլ կը լուսաւորւի
քո միտքը. ինչ խորհում ես կը կատա-
րւի, ում ցանկաս կը հասնես, մեծերից բարի
կը գտնես և աւետեաց ձայն կը լսես ու կը
խնդաս: Թշնամիդ կը զղջայ և կը դառնայ
քո բարի ընկերը: Երուսաղէմի Ս. Յակոբ-

եանց վանքին ուխտ արա, և մի թանկարժէք ոսկեղէն ընծայ տար, որ աւետեաց լուրերը քո գլխից անպակաս լինի:

Գ.

Նենգաւոր և վնասակար ես դու սիւմարդ, մեծ վտանգ կայ քո առաջ—նենգութեան մէջ կնկնես: Շատերը մտածում են քեզ չարիք գործել և դու չես իմանում քո գլխի կորուստը, որովհետեւ չես կատարում Աստուծոյ կամբը: Ինչ նպատակ որ ուունես չի կատարւիլ: Թէ ջանապարհ գնաս քեզ բարի չի լինի, բայց եթէ դառնաս չարութիւնիցդ և քո խոստացած ուխտը կատարես—յաջողութիւն կը գտնես:

Ը.

Շնորհալի ես դու սիւմարդ. քո առաջ շատ բարիք եմ տեսնում. մեծամեծներից պարգև կտանաս, կուրախանաս և բարւոյ կը հանդիպես: Կխնդաս զաւակից և քո ամուսնուց և կը լինես բարի յիշատակ քո ծնողներին համար: Աստուծոյ ինչ որ խնդրես—կառնես. թէ հեռաւոր ունես—կգայ և կտեսնես, թէ հիւանդ ունես—կառողջանայ և օրէց-օր կլաւանայ: Ծխելուց և արբեցողութիւնից զգոյշ կաց. կեանքիդ փասը և մահը դրանցից է առաջանալու:

Ո.

Ոսկու նման մաքուր ես դու սիւմարդ: Դու պարտաւոր ես ամեն ժամանակ Աստուծոյ գոհանալ, որ թէև տրտմել ես, բայց կրկին ուրախալու ես և Աստուծոյ շնորհը քեզ վրայ է լինելու: Բայց չար մարդկանցից պատրաստ կաց: Աստուծոյ պարգև և շնորհ կառնես և զաւակներից կը խնդաս, ամենին ցանկալի կը լինես. քո հարստութիւնը երբէք չի պակասիլ: Եթէ տեղիցդ փոխւես ուրիշ տեղ գնաս բարւոյ կը հանդիպես. աւետեաց ձայն կը լսես և հեռաւոր մարդ կտեսնես. քո մահը լաւ օր կը լինի, երազը, որ տեսել ես—բարի է:

2.

Չարեկամներդ շատ էն սիւմարդ, բայց դու ամենից կը փառաւորւես. մեծ պարգև կտանաս և իշխանութեան կը հասնես. թշնամիդ ամօթով կմնայ քեզ մօտ. օտար երկիր կը գնաս կրկին ու կրկին պարգև կառնես ամեն նեղութիւնից կազատւես. քո փառքը շատ մեծ է լինելու, ում որ ուզենաս բարով կտեսնես և ում ցանկաս—կը հասնես: Դու բարի ես, բարութիւնը Աստուծոյ շնորհք է.

թագաւորի սէրը և մեծամեծների պատիւը, քո վրայ միշտ հաստատ է լինելու: Երանիք եղ:

Պ.

Աստուած քեզ բարիքի պարգև կտայ. Աստուծով քեզանից չարը հեռացաւ և բարին մօտեցաւ: Դու իմաստուն ես և ամենքին խրատում ես, միայն քո անձը չար կամեցողներից չես պահում, որոնք քո հացն են ուտում և ուզում են քո դէմ չարութիւն անել: Սակայն Աստուած քեզ հետ է, և ինչ որ գործես նա քեզ դէպի բարին կառաջնորդէ: Աստուծուն ապաւինիր, նա կը կործանէ քո թշնամիներին և կազատէ քեզ ամեն որոգայթից ու դու բոլորի ցանկալին կլինես. քո հարստութիւնը երբէք չի պակասիլ:

Ջ.

Ձրի պէս դադար չունես. մեծ էիր խոնարհեցար, մտածում ես, բայց չես կարողանում մի խորհրդի վրայ կառնալ: Մի տրամիր, քեզ մեծ ուրախութիւն է գալու. դու բարի ես կամենում և Աստուած քեզ բարին կառաջնորդէ: Տրտմութեան փոխարէն դու կուրախանաս: Աստուծոյ մեծ

չնորհք կառնես. զնա և գործիր, մի տարակուսիր. թէ վաճառականութեամբ զբաղես՝ կշահես, թէ ճանապարհ զնաս՝ ողջութեամբ յետ կդառնաս. դու քո բաղդի վրայ տարակուսած ես Աստուած կբանայ քո բախտի դուռը և փառքդ կմեծանայ, մեծամեծներից էլ պարգև ու ընծաներ կստանաս: Ազգիդ պէտքերին միշտ օգնութիւն հասցրու, որ միշտ հարուստ և երջանիկ ապրես:

Ռ.

Ռեբեկայի և Ռաբելի բաղդն ունես. հօրդ տանից կհեռանաս, բայց մեծ բախտի կը տիրանաս. որդիներով կը բազմանաս, կեանքիդ արևը կը կշտանայ: Տրտմութիւն չես տեսնիլ. բայց — չարակամներ շատ ունես. եթէ քեզ պահես ամուսնուդ հաւատարիմ լինես, երանի քեզ էլ բնաւ վատ օր չես տեսնել: Ամեն տեսակ բարիքից էլ կը լիանաս խորին ծերութեան կը հասնես և բարի մահի կը հանդիպես: Եթէ ոսկի զարդերը և թանկագին շորերը քեզ գլխահան չանեն դու կը լինես աշխարհիս առաջին բախտաւորներից մէկը և այն ժամանակ բոլորը երանի կտան քեզ: Այսքանը քիչ է. քեզ փառք տւողին փառք պէտքէ տաս թէ սրտով և թէ գործերով: Եթէ մի որք աղջիկ պահես և ուրախութեամբ բաղդաւորացնես, այն ժամանակ ճիշտ որ երանի քեզ:

Ս.

Ստախօս ես դու սվ մարդ, որբան
ամբարւած չարիք եմ տեսնում քո սրտում:
Կեանքիդ համար ի՞նչ ես հարցնում,
ինչ ես յիմարացել. ի՞նչ ես դուռն է դուռ
ընկել և պաշտօն աղաչում դու, հաստա-
գլխիս— թէ արժանաւոր ես թող պաշտօնը
քեզ որոնէ, եթէ դու պաշտօնի ետևից ես
ընկել, նա քեզնից կը փախչի. իսկ եթէ
բռնեցիր նա քեզ գետին կը գլորէ ու կրկին
կը փախչի, որովհետեւ դու խելքդ փառա-
մօլութեամբ կորցրել ես. քո նախագծերը չեն
կատարւի, որովհետեւ դու չար ես խորհում
բոլորի համար, ուստի և չարը գլխիցդ չի
պակասիլ: Չարութիւնը մտքիցդ հանիր քո
ընկերներին և առհասարակ մարդկանց համար
չարութիւն սի մտածիր, թէ չես լսիլ տա-
ժանակիր փորձանքների կը հանդիպես: Խո-
րամանկ աղւէս, դու շնացող էլ ես. շնութիւ-
նից ձեռք վերցրու, արբեցողութեանդ վերջ
տուր թէ չէ վայ, մեծ վայ քեզ:

Վ.

Ով սիրելի, Աստծուն փառք տուր.
վարդեր են բացւում քո առաջ, քեզ մեծ ու-

րախութիւն է դալու, քո աշխատանքից շատ
մարդ կուտի. Աստուած կտայ քեզ մի
շատ ուրախ և գեղեցիկ զաւակ, հեռաւոր
տեղից աւետեաց ձայն կլսես, ամեն կողմից
յաջողութիւն կը գտնես. գնա և ինչ որ
մտադրութիւն ունես արա, ամեն կողմից
յաջողութիւն ունես: Վատ ընկերներից ըզ-
գոյշ կաց. ծխախոտից ձեռք վերցրու ապա
թէ ոչ նրա կրակից քեզ վնաս է գալու,
իսկ ծխից կոյրութիւն և թորախտ:

Տ.

Տէր Աստուածածին, փառք տուր քեզ
ով մարդ, ուրախութիւն եմ ուղարկում քեզ
դու տարակուսած ես. եթէ որեւէ մէկին բան
տաս կուով յետ կառնես, ում որ բարի ես
անում նա քեզ չար է մտածում անել: Դու
աղօթքից և աղաչանքից մի դադարիր, քեզ
մեծ ուրախութիւն է գալու, որովհետեւ քեզ
վիճակախաղում մեծ հարստութիւն է ըն-
կնելու, մեծ, նշանաւոր բախտի և փառ-
քի առաջ ես կազմելու եթէ հեռաւոր ունես
կը գայ, եթէ հիւանդ ունես կառողջանայ:
Մի խօսքով, երանի քեզ, երանի եկեղե-
ցիներին, դպրոցներին, չքաւորներին ու-
րախ սրտով օգնելու ես նրանց: Թողթա-
խաղից բոլորովին հեռու կաց, ապա թէ ոչ
ունեցած հարստութիւնդ և պատիւդ մի օր-

ւայ մէջ կը կործանես: Որք տղաներ պահիր
և ուսման տուր, որ միշտ երջանիկ ապրես:

Բ.

Ուրախացնում եմ քեզ, ռվ մարդ, դու բարի
ես և Աստուած քեզ բարին կառաջնորդէ.
ուժ ցանկաս. — կը հասնես, բայց քո թշնա-
միները շատ են: Յիմարները քո մասին վատ
են խորհում, սակայն դու մի վախենար,
որովհետև քեզ Աստուած է օգնում: Կամե-
նում ես ճանապարհ երթալ, մի վախենար
գնա, ուր որ գնաս ողջութեամբ կը վերա-
դառնաս, ինչ խորհուրդ որ ունես Աստուած
կը յաջողի: Միայն հնազանդ եղիր ծնողացդ և
մեծերիդ ու հաւատարիմ ամուսնուդ: Գի-
նուց զգուշացիր: Եկեղեցի յաճախիր, ուխտդ
կատարիր: Եթէ եռանդուն մասնակցութիւն
ունենաս ազգիդ գործերին՝ կարող ես ան-
ւանդ փայլը միշտ պայծառ պահել:

Յ.

Յաւերը քեզանից հեռացան ռվ մարդ,
քո առաջ շատ բարիք կայ. մեծամեծներից
պարգև կառնես, կուրախանաս և բարիքի կը
հանդիպես, կխնդաս զաւակից և ամուսնուց
կը լինեն ծնողներիդ համար բարի յշատակ:

Եթէ տեղիցդ որևէ տեղ փոխուելու լինես
չես հաստատուիլ, որովհետև ամեն կողմից
քեզ շրջապատել են նենգաւորները. մար-
դկանցից բաղդ չունես, քո բարիքը ամբող-
ջովին Աստուած է: Աստուած քեզ կտայ իր
ողորմութիւնը և ամեն դժւարութիւնից և
նեղութիւնից կազատես: Թղթախաղից զգոյշ
կաց — քո մեծ թշնամիդ թղթախաղն է:

Զ.

Ով մարդ, չարը քեզանից հեռացաւ և
բարին մօտեցաւ, անօրէն մարդկանցից
փախեր կրեցիր, քեզ հալածողը և քո թըշ-
նամին քո ազգն եղաւ. բայց դարձեալ պատ-
րաստ կաց քո թշնամիներից, քո առաջ
փորձանք կայ, բայց պէտքէ ազատես, միայն
եթէ քո մի քանի մոլորութիւններից կը
երդւես, որ ձեռք կը վերցնես — անպատճառ
կազատես, ապա թէ ոչ՝ վայ քեզ:

Շ.

Փախիր անզգամ մարդուց, որ ապա-
գայում վնաս չկրես: Բան ունես կորցրած,
սակայն մի տրտմիր, կորուստդ կը գտնես:
Ինչ նպատակ որ ունես Աստուած կը կա-
տարի, բայց քիչ համբերող իղիր: Դու տըրտ-

մելու ես, սակայն Աստուած կազատէ քեզ այդ տրտմութիւնից: Քո առաջ մեծ ուրախութիւն կայ: Դու նման ես Աբրահամին, որին Աստուած սիրեց և տրտմութիւնից ազատեց. դու էլ կազատես տրտմութիւնից և ամեն չարից: Եթէ թղթախաղից և ծխելուց հեռու պահես քեզ ամենաբախտաւոր մարդը կը լինես դու աշխարհի երեսին:

— Բ.

Քեզ ո՞վ մարդ ամենն էլ սիրում են. բայց կայ մէկը, որ չարախօսում է բո մասին և հոր է փորում քո առաջ, սակայն չի կարող վնասել քեզ: Գնա Աստծուն ուխտ կատարիր, որ շատ չարից քեզ փրկէ, որովհետեւ հասել է քեզ մեծ նեղութիւն և դու կարող ես տուժել: Պոռնիկ կանանցից քեզ զզոյշ պահիր, ապա թէ ոչ յաւիտեան կը զզջաս, սակայն այն ժամանակ արդէն ուշ կը լինի: Դու նման ես Յակոբին, որին Աստուած փրկեց ու մեծ փառքի ու բախտաւորութեան հասցրեց: Եթէ դու շնութիւնը ատես, մաքրութիւնը սիրես և ամեն կիրակի օր եկեղեցի գնաս բախտաւոր, հարուստ և երջանիկ կը լինես և քեզ վի-

ճակով անպատճառ մեծ հարստութիւն է ընկնելու: Եթէ դպրոցներին ու չքաւորներին և որ զլխաւորն է չմոռանաս եկեղեցիներին բաժին հանել, շատ երկար տարիներ բախտաւորութեան մէջ կը լինես:





V.

ԱՐԻՒՆ ԱՌՆԵԼՈՒ ԼԱԻ ԵՒ ՎԱՏ ԺԱՄԱ-
ՆԱԿԸ ԸՍՏ ԼՈՒՄՆԻ ՅՈՒՑՄԱՆ

Լուսնի առաջին օրը—լաւ չէ, բորո-
տութիւն կ'բերէ: 2 և 3 օրը—արիւն մի
առնուր, որովհետեւ հիւանդութիւն կառաջա-
նայ: 4-ը 5-ը և 6 ը արիւն մի առնուր, որով-
հետեւ եթէ առնես արիւնը կը պակասի և
դու կ'հիւանդանաս: 7 և 8 ը արիւն մի առ
եթէ արիւն թողնես, միևնոյն է ինչ էլ որ
ուտես բեղ ուժ չի տայ և սիրտդ կսկսի
դողալ: 9 ը-լաւ չէ, եթէ արիւն թողնես
երեք անգամ երեսիդ գոյնը կը գնայ: 10 և
11-ը լաւ չէ: 12 և 13-ը արիւն թողնելը—
լաւ է մարդու կը գէրացնի: 14-ին արիւն
չառնես—կը հիւանդանաս: Լուսնի 15-ին
առնասարակ, ոչ մի ժամանակ արիւն մի
թողնիր կը դողացնես և ինչ որ ուտես ու

խմես բոլորը կ'փոխես: 16-ին բարի է, եթէ
ինարկէ տարէնը մի անգամ առնես: 17-ին
եթէ առնես ամբողջ տարին առողջ կը լի-
նես: 18 և 19-ը լաւ չէ: 20-ը շատ բարի
է, ինչ որ ուտես կը մարսես: 21-ին բարի
է, մարդ առողջ կը լինի: 22-ին—լաւ է,
մարդու կը պնդասրտի: 23-ին—լաւ է սիրտդ
ուրախ կը լինի: 24-ին բարի է: 25-ին և
26-ին լաւ է: 27-ին ով էլ արիւն առնի
յանկարծաման կը լինի: 28, 29, և 30-ին
լաւ չէ, ոչ արիւն առնելը և ոչ էլ որեւէ
դեղ խմելը:

Չ Ա Ր Ա Ս Տ Ղ Ը

Այս է չար աստղը, որ յայտնեց Աս-
տուած Յիսուայ բահանային և ասաց. « Երբ
երեսիդ դէմ լինի մի գնար, բարի գործ շինիր,
թողթ մի գրիր: Հիմք մի ձգիր, մի վարիր, մի
տնկիր: Սորանով յաղթեց Յեսուա բահանան
Իսրայէլի որդոցը այն ժամանակ, երբ կռա-
պաշտ էին: Լուսնի 1, 11, 21-ին արեւելքն է, 2,
12, 22-ին հարաւ-արեւելքն է: 3, 13 և 23-ին
հարաւային կողմն է: 4, 14, և 24-ը հա-
րաւ-արեւմտեան կողմն է: 5, 15 և 25-ը արե-
ւմտեան կողմն է: 6, 16 և 26-ը հիւսիս-արեւմ-
տեան կողմն է: 7-ին, 17-ին և 27-ին—հիւ-
սիսում, 8-ին 18-ին և 28-ին հիւսիս-արեւ-

եւքի մէջն է. 9-ին, 19, 29-ին անգուանդը
կը լինի. 10-ին, 20-ին և 30-ին երկինքը կը
լինի:

ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՋՈՅՆԵՐ՝ ՀԱՁԻ ԴԷՄ

Սխառը խորովիր և պճեղը մեղրի մէջ
թաթախիր կեր, կամ սխառը եփիր մեղրով
կեր: Կամ թէ՛ խորոված բոխկը տաք-տաք
մեղրով կեր: Կամ վարդը զինին և մեղրը
իրար խառնիր և կեր: Կամ նուշը աղա,
մեղրով խառնիր և առաւօտ-երեկոյ մի-մի
գդալ կեր երեք օր շարունակ, և կամ մի-
անպալին, որ ամեն անտառի մօտ գտնուում
է վերցրու և առաւօտեան-երեկոյեան կեր:

ՃԻՃԻԻ ԴԷՄ

Վերցրու գեղձը և տերևը, ջուրը քա-
միր, առաջ խմիր կաթը, որ ճիճուն կաթի
մէջ հաւաքւի, յետոյ խմիր գեղը, որ անմի-
ջապէս հանի երկար կոլոր և տափակ ճի-
ճուները:

ԱՏԱՄ ԱՅԱԻԻ ԴԷՄ

Կանաչ գորտի ճրագուն՝ եթէ իրան
հասցնես— գուրս կը գայ: Եղինջ խոտը ե-
փիր և բերանդ նրա գոլորշու վրայ բռնիր

և կամ մանանեխն ու ընկոյզը անապական
զինով եփիր և բերանդ առ ողողիր և դեն
ածայ:

Մ Ա Յ Ա Մ ՈՒԼԻԻ ԴԷՄ

Ուղտի մէղը երեք անգամ անօթի ժա-
մանակ եթէ խմես— կը լաւանաս:

ՕՁԱՀԱՐԻ ԴԷՄ

- 1) Գաղտիկուոր ծեծիր վրան դիր.
- 2) պանիրը քացախով տրորիր և վրան դիր,
- 3) Պատուտակը ծեծիր և դիր վրան և 4) խն-
ձորի տերևը ծեծիր և երեք անգամ վրան դիր:

ՈՁԼԻԻ ԴԷՄ

Վերցրու Սպանդի հունդը 1 գրամ. աղա
և խառնիր պախլի ճրագի հետ ու օծիր մար-
մինդ: Կամ թթու նռան կեղեւ և խնկի փո-
շին ձէթով եռացրու և օծիր մարմինդ տա-
րէնը երկու անգամ: Առ 1 գրամ. Ժիպակ
բիշ թրով շաղախի հինայի հետ, լցրու մի
փոքրիկ տապակի մէջ և վզիցդ կախիր,
կամ ծոցումդ պահիր, ոչինչ երբ բոլորովին
կանխադասան:

Ծ Ա Ռ Ե Ր Ի Ո Ր Դ Ե Ր Ի Դ Է Մ.

Ծծումբը ծխիր, կամ ծծումբը թրջիր
և միացրու ջրի հետ, ապա ցանիր որտեղ
կուզես—բոլորը կսատակեն և կը ոչնչանան:

Ն Ո Ի Ի Դ Է Մ

Տատասկի ջուրը առ և կտաւը ներկիր
վրադ առ կամ տակդ ձգիր լուերը չեն մո-
տենալ: Կամ ընկուղենու տերեւները փոխ
անկողնիդ մէջ անմիջապէս լւերը կը հե-
ռանան:

ԱՅԼ ԹԵԹԵԻԱԿԻ ԴԱՂՏՆԻՔՆԵՐ

Ա. Ով որ վարդենու արմատը իր մօտ
պահի, օձի կծելուց ազատ կը լինի:

Բ. Եթէ մէկին կատաղած շունը կծի,
թթենու տերեւ ծածիր և կծածի վրա դիր:

Գ. Եթէ մէկը թունաւորւել է, տատասկը
ծածիր և ջուրը խմացրու:

Դ. Կարիճը չորացրած, փոշի արած,
կարիճի կծածի դեղ է:

Ե. Վերցրու կարիճը կենդանի դցիր մի
փոքր շշի մէջ և վրան ածա ձիթապողի
ձէթ որբան որ այս ձէթը հնանայ—այն-
բայն աւելի բուժիչ կլինի կարիճի կծածի
դէմ:

Զ. Եթէ մէկին օձը, կամ ուրիշ թու-
նաւոր կենդանի կծի, վերցրու կրակի մի
կտոր բռնիր կծած տեղի վրայ մինչև որ
թոյնը մի տեղ ժողովի, որը ուռչելով ևը
պատռի և ժահրը դուրս գալով թունաւոր-
ւածը կ'զատուի:

Է. Դարձեալ եթէ որևէ մէկին թու-
նաւոր զեռունները կծեն, վերցրու թորթիկ
խոտը կամ նրա ծաղիկը և կամ արմատը,
որն էլ պատրաստի կը գտնւի ծածիր և դիր
խայթած տեղի վրայ, որը անմիջապէս ժահ-
րը քաշելով դուրս կը թափէ. սա կոչուում
է մեղրածծուկ, որի ծաղիկը մեղուն շատ
է սիրում և ժողովում:

Ը. Ծոթրինը քացախով եփիր, բե-
րանդ առ և մանանեխը ծածիր ու գլխիդ
քսիր մոռացկոտութիւնդ կը տանի:

Թ. Եթէ կամենում ես անծնելութեան
(չբերութեան, ամլութեան) պատճառն ի-
մանալ արձն է թէ էզը, վերցրու երկուսի
էլ մէզը առանձին—առանձին ամանների մէջ
և նրանց մէջն ածա մի փոքր թեփ. 9 օր
ծածկած պահիր, ապա բաց արա և տես,
որ ամանի մէջ կը գտնւի ժժուկ—ամլու-
թեան պատճառը նա է:

Ժ. Եթէ ցանկանում ես, որ ամբողջ
սենեակը խաղող երևայ, առ մէկ շիշ, ձէթի
իւղով լցրու և երբ խաղողը ծաղիկ է մէկ
ոխկոյզ (որ կտրւած չլինի իր որթից) դիր

շնի մէջ: Շիշը կապիր որթից ամուր և թող մինչև խաղողաքաղը. յետոյ քաղիր խաղողը. այդ ձէթն ածա ճրագի մէջ և վառիր. ամբողջ սենեակը խաղողալից կերեայ:

Մ Ա Ձ Չ Բ Ո Ի Ս Ն Ե Լ Ո Ի Դ Է Մ

1. Ագռաւի ճրագուն ուր որ քսես մազ չի բուսնիլ. 2. Աղաւնու լեղին որտեղ էլ քսես մազ չի բուսնիլ. 3. շան կաթը ուր որ էլ քսես մազ չի բուսնիլ. 4. էծի լեղին նշաղըով շաղախած ուր որ քսես մազ չի բուսնիլ. 5. Կառւի չորացրած աղբը փռչիւրա, մաղիր, թունդ քացախի հետ շաղախիր մինչև որ թանձրանայ և եթէ սրանով քսես մազերդ երբէք չի բուսնիլ:

Մ Ա Ձ Բ Ո Ի Ա Ն Ե Լ Ո Ի Հ Ա Մ Ա Ր

1. Եւդանն եփիր կաթով, քսիր կամ լայ ուր որ կամիս մազ կբուսնի: 2. Հաղի կամ խոզի իւղը որտեղ էլ քսես մազ կբուսնի:

ԿԱՅՆՈՎ ԿԱՄ ԴԱՆԱԿՈՎ ԿՏՐԱԾԻ ԴԷՄ

Սպիտակ լոբին լաւ չորացնել և ապա մաղել ինչպէս փռչի, յետոյ ցանել կտրած խոցի վրայ այնքան ժամանակ մինչև որ աւրինը դադարի և առողջանայ:

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ Ա Կ Ա Ն Մ Տ Ք Ե Ր

1. Երիտասարդութիւնը մի վարդ է, իսկ ծերութիւնը փշեայ սրակ:

2. Հառաչանքներով դեռ ոչ ոք չի բուժել իր վիշտը:

3. Սակաւակերութիւնը հեռացնում է շատ և շատ հիւանդութիւններ:

4. Համեստ նախաճաշը, երեկոյեան ճաշի ախորժակ է բաց անում:

5. Մաքրութիւնն է առողջութեան պահպանը և աղբիւրը:

6. Ոչ միայն մարմինդ մաքուր պահիր այլ և բնակարանդ:

7. Լաւ է խնամել առողջութիւնը, բան թէ իր հիւանդութիւնը:

8. Քունդ գալուն պէս պառկիր, զարթնելուն պէս հազնիր, անօթիաւալուդ պէս ճաշիր:

9. Եթէ ուզում ես երկար ապրել մաժուն շատ գործ ածայ:

10. Չգուշ եղիր հում բան ուտելուց, բորիկ ման գալուց և կայուն ջուր խմելուց:

11. Երեկեայ հացը, այսօրեայ միսը մի ամուսայ ալիւրը և մի տարւայ գինին մարդուն առողջ են պահում:

12. Ուրախութիւնը մարդուն կեանքը երկարացնում է, իսկ տխրութիւնը՝ օրերը կարճացնում:

13. Մեծ խնամքով պահիր երիտասարդութեանդ փափուկ, զգայուն և ծաղիկ հասակը մեղքերի խորշակներից, որ երբ հասնի կեանքիդ աշունը, չճաշակես նրա դառը պտուղը:

14. Առողջութիւնն ու ժամանակը հարստութիւնից թանկագին են:

ИHB № 28420



119-5

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին

ԳՐԲՈՑԿԻՑ ԱՐՏԱՏՊԵԼԸ ԱՐԳԵԼԻԱԾ Է.

2013

234/4

«Ազգային գրադարան»



NL0058123

